

9747





ԳՈՄԱՐԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1.1

Ա. ԿՈՒՐԵԼԱ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ՅԵՐԻՏԱԾԱՐԴԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՅԻՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱԴՐԱ ՈՒՐԳԱԳԻՇ

Թարգմ. Թ. ԴԱՇՑՈՅԱՆ

ՎԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

3511  
4-99

ԽԱՎԱՐԵԼՈՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
1927

29.05.2013

1 DEC 2009  
24 SEP 2006

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԿԽԸ  
4-99

Ա. ԿՈՒՐԵԼԼԻ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱԲՈՅՏ ՈՒՐԳԱԳԻՇ

Թարգմ. Ռ. Դ. ՇԵԽԵՍ. Ն.

1003  
13795



Պետական Հրատարակություն.— Երևան. 1927

Առաջին համապատասխան համար բարեկարգ պահպան

9747

ՏՏԾ 432 45

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յերիտասարդական կոմմունիստական Ինտեր-  
նացիոնալի պատմությունը կարելի է քննել  
միայն վորպես ժամանակակից բանվորական  
շարժման պատմության մի մասը։ Կոմիերիտական  
Ինտերնացիոնալի սկզբնավորությունն ու զար-  
գացումը սերտ կերպով կապված են միջազգային  
բանվորական շարժման հեղափոխական վորու-  
ածման և պրոլետարական ավանդարդի՝ ոեֆոր-  
միզմի կապանքներից ազատագրվելու պատմու-  
թյան հետ։

Բայց և այնպես կոմիերիտական Ինտերնա-  
ցիոնալի պատմությունը միևնույն ժամանակ մի  
բոլորովին նոր գլուխ է կազմում բանվորական  
շարժման պատմության մեջ։ Կոմմունիստական  
պատանեկական կազմակերպություններ ստեղծե-  
լով պրոլետարիատն ստեղծեց կազմակերպության  
ու պահպարի նոր ձև։

ԿիՄ-ի հիմնագրման մոմենտից սալքարող  
հեղափոխական պրոլետարիատի մեծ բանակին

|                                      |                  |             |
|--------------------------------------|------------------|-------------|
| № 519                                | Գրառեպար 110 (բ) | Տիրաժ 4.000 |
| Պետհրատի առաջին տպարան Վաղարշապատում |                  |             |

ավելացավ մի նոր ստվարաթիվ ու շատ կարևոր  
ռազմական բանակ եմ:

ԿիՄ-ի զարգացումը կարելի է ըմբռել ու  
հասկանալ համաշխարհային բանվորական շարժ-  
ման մեջ հետպատերազման շրջանում կատար-  
ված փոփոխությունների խոշոր պրոցեսի շրջա-  
նակիներում միայն: ԿիՄ-ն ու նրա բոլոր սեկցիա-  
ներն ամենասերտ կերպով կապված են այդ  
պրոցեսի հետ վոչ միայն իբրև լոկ պասսիվ այն  
վորպես նրա ակտիվ մասնակիցներ:

Ուշադրությամբ քննելով կոմիերիտմիու-  
թյունների ու նրանց միջազգային կազմակերպու-  
թյունների կատարած գործը, ուշադրության առ-  
նելով նրանց մասնակցությունը բանվոր դասա-  
կարգի բոլոր խոշոր ճակատամարտերում, մենք  
չենք կարող չնկատել, վոր այստեղ միաժամանակ  
կատարվում ե փորձնումն կազմակերպության ու  
գործունեյության նոր ձեռքի՝ բանվոր դասակար-  
գի այս նոր՝ դասակարգային ինքնագիտակցու-  
թյան յեկող շերտերի—նրա յերիտասարդ սերունդի  
համար:

Կոմմունիստական պատանեկան շարժման  
այս կրկնակի բնույթը գժվարացնում ե նրա պատ-  
մությունը գրելու գործը: Կազմակերպությունն-  
երի զարգացումն ու շարժման առանձին պրո-  
բլեմների խորացումն այստեղ կատարվում են վոչ

այնպես հասարակ ձևով, ինչպես այդ կատարվում  
ե բանվոր դասակարգի այլ կազմակերպություն-  
ների մեջ, վորոնք իրանց թիկունքում ունեն  
արդեն զարգացման յերկար շրջան:

Առանձնապես գժվար ե ներկայացնել ԿիՄ-ի  
զարգացման ճիշտ պատկերը միությունական կոմ-  
իստականների համար: Համամիությունական  
լենինյան կոմիսրիտմիությունը ծնվել ե կատա-  
րելապես հասունացած կոմմունիստական կուսա-  
կցության ներկայությամբ ու զարգացել ե պրո-  
լետարական գիկատառը պարմաններում հա-  
մարյա թե բոլորովին համաշափ տեմպով, այդ  
պատճառով նրա պատմությունը գրելը շատ ա-  
վելի հեշտ է, քան ԿիՄ-ի մնացյալ սեկցիաների  
պատճությունը: Համ ԼԿՅԵՄ-ը մեղ տալիս ե  
պատկերը մի կազմակերպության, վորը թեև  
սերտորեն կապված ե յեղել յերկրի և կոմկուսա-  
կցության քաղաքական կանքի հետ, բայց հիմ-  
նականում զբաղված ե յեղել իր ուրույն պատա-  
նեկան խնդիրներով: Պատանեկան այդ խնդիր-  
ները նախորով սահմանագծված են յեղել քիչ  
թե շատ պարզորոշ կերպով: Նրանց աստիճանա-  
կան զարգացումն ու ավելի լայն կիրառումը կա-  
տարվել ե յերկրի ընդհանուր զարգացման հետ  
զուգընթաց, կոմկուսակցության դեկտարու-  
թյամբ:

Այսինչ կիՄ-ի կապիտալիստական յերկըր-  
ներում գտնվող միուս բոլոր սեկցիաների պատ-  
մությունը ձեզ տալիս ե մշտական մակընթացու-  
թյունների ու տեղատվությունների պատկերը:  
Յերիտասարդական միությունների զարգացումն  
այստեղ յենթարկվում ե կապիտալի ու աշխա-  
տանքի միջև մզգող հեղափոխական պայքարի  
ուժեղացման ու թուլացմանը, պայքարող պլո-  
լետարիատի մասնակի հաղթությունների և պար-  
տությունների ազգեցությանը: Պատանեկան կազ-  
մակերպություններն այստեղ հաճախ ուժեղ կեր-  
պով մասնակցում են կոմինտերնի դեռ բայց կե-  
կացման ձանապարհին գտնվող սեկցիաների ներ-  
քին քաղաքական տարածանություններին: Կա-  
պիտալիստական յերկրների պատանեկան առան-  
ձին կազմակերպությունների զարգացումը, վեր-  
ջապես, վորոշվում ե նաև պատանեկան շարժման  
բազմազան արագիցիաներով: Նախահեղափոխա-  
կան շըջանի կոմմունիստական պատանեկան կազ-  
մակերպությունների միասնական բնույթի ստեղ-  
ծումը կարող ե տեղի ունենալ միմիայն այդ  
արագիցիաների հաշվառման հիման վրա:

Միջազգակին կոմմունիստական պատանեկան  
շարժումը մինչեւ աժմ ել դեռ չի գտել վոչ ժա-  
մանակ և վոչ ել անհրաժեշտություն՝ քննելու իր  
պատամության բազմազան ու խճճված թերթը:

Մինչեւ այժմ ել դեռ զոյտթյուն չունի կիՄ-ի  
մի պատամություն, վորի մեջ լիտատար կերպով  
նկարագրվեր բանվորական հեղափոխական շարժ-  
ման այս նոր ողակի աստիճանական զարգա-  
ցումը: Հավանորեն նման՝ պատամություն չի գրվի  
դեռևս յերկար ժամանակ: Այդ պատճառով մենք  
ստիպված ենք առաջմ բավականանալ միայն  
անցքերի քիչ թե շատ ճշգրիտ ժամանակագրա-  
կան շարադրանքով:

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՇԱՐԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Նախապատերազման շրջանի բանվորական շարժումը գտնվում էր ռեֆորմիզմի ազգեցության տակ: Շնորհիվ գաղութներից ստացած գերշահութների, կապիտալիստներին հաջողվել էր բանվոր դասակարգի վերին շերտերի համար ստեղծել նյութական այնպիսի դրություն, վորով նրանք անջատվել ելին պրոլետարիատի լայն մասսաներից: Այդ պատճառով ել այդ վերին շերտերի, այսպես կոչված բանվորական արիստոկրատիայի շահերը սերտ կերպով կապված ելին տիրապետող դասակարգի շահերի հետ:

Բանվորական արիստոկրատիան չեր ձգտում պրոլետարական հեղափոխության, բանի վորփորձը նրան ցուց եր տվել, վոր նա կապիտալիստական կարգերում ել կարող ե իբր թե հասնել իր դրության բարփոքմանը: Պրոլետարիատի այդ վերին շերտերը նախապատերազման շրջանում ղեկավարում ելին բոլոր բանվորական կազմակերպությունները: Սրանց միացած ելին սույնական կուսակցությունների և ցիալդեմոկրատական կուսակցությունների և

արհշարժման ղեկավար տարրերը, վորոնք վորպես պետական և քաղաքավիճակ պաշտոնայաներ, բանվորական խոշոր կազմակերպությունների քարտուղարներ ու ակտիվ աշխատողներ կամ քաղաքավիճակ ինքնավարությունների ու պարագմենտների անդամներ, ավելի ու ավելի ելին հարազատանում բուրժուազիայի ապակարատի հետ: Անա այս յերկու տարրերը սոցիալիստական կուսակցություններին և պրոֆմիություններին առաջնորդում ելին բուրժուազիայի հետ համագործակցելու ուղիով, հականեղափոխական ուղիով:

Համաշխարհային պատերազմին, վորի ընթացքում պատերազմին մասնակցող պետությունների պլոյետարիատը գնում էր մեռնելու «իր հարազատ» բուրժուազիայի շահերը պաշտպանելու համար, այդ համագործակցության բարձրագույն կետն էր: Համաշխարհային պատերազմի հետևանքներից մեկն այն յեղափ, վոր տապալվեցին այն հիմքերը, վորոնք անհրաժեշտ ելին բանվորական արիստոկրատիայի գոյության համար: Պատերազմի հետևանքով առաջացած ընդհանուր փլուզումը պահանջում էր յերկրի շտապ վերականգնուում և կապիտալիստներին ալևս հնարավորություն չեր տալիս պահելու արտօնալ բանվորների այդ խըմբակներին: Ֆրոնտներում ու գործարաններում բանվորներն ու գյուղացիներն ոկտեգին խորհել այն մասին, թե վորպիսի խարեւության են յեն-

թարկված յեղել։ Նրանց հիմնաթափությունն ու  
դժգոհությունները գնալով աճեցին և վերջացան  
1917 և 18 թվերի մի շաբք խոշոր ապստամբու-  
թյուններով։ Այս ապստամբությունները վոչ  
միան պատճառ դարձան վորոշ յերկրների պար-  
ապության, այև խորապես ցնցեցին նույնիսկ պա-  
տերազմից հաղթող դուրս յեկած յերկրները։

Հեղափոխական այս վերելքի ընթացքում  
սոցիալիստական կուսակցությունների ներսում  
զորեղացավ հեղափոխական ուսմունքին հավատա-  
րիմ մնացած վորոշիկ խմբակների ազդեցությունը։  
Սրանք խմբվեցին սուսական բայց կիկների կու-  
սակցության շուրջը, II Խոտերնացիոնալի միակ  
կուսակցության, վոր հավատարիմ եր մնացել  
հեղափոխական մարքսիզմի սկզբունքներին։

Հեղափոխության ակտիվիտերագույն պրո-  
ցեսում տեղի ունեցավ նաև պատանեկան շարժ-  
ման հեղափոխական վերելքը։

Մինչպատերազման շրջանում պրոլետարա-  
կան յերիտասարդությունը, բնականաբար, չեր-  
կարող ոգտվել այն «բարեխներից», ինչով ոգ-  
տվում եր պրոլետարների վերին շերտի մի վոր-  
շիկ խմբակը։ Իմպերիալիստական շրջանն աշխա-  
տավոր յերիտասարդության համար անողոք շա-  
հագործման ու ճնշումների մի շրջան եր նրա  
կանքի բոլոր ասպարեզներում։ Նախապատերազ-  
ման շրջանում յերիտասարդությունն ավելի լայն

չափով, քան յերբեկցիք, արդյունաբերության մեջ  
եր քաշվում վորպես սևազործ և անվորակապ  
բանվորություն։ Գնալով աճում եր խոշոր ար-  
դյունաբերության մրցումը մանր արդյունաբերու-  
թյան հետ, վորի հետևանքով ուժեղանում եր  
շահագործումը մանր ձեռնարկատերերի ու վար-  
պետների կողմից։ Այս ձեռնարկներում աշխատող  
յերիտասարդ բանվորությունը իր կաշու վրա  
զգում եր մրցման հետևանքները։ Միաժամանակ  
նոր ու նոր պատերազմների համար պատրաստ-  
վող բուրժուազիան աշխատում եր դպրոցական  
կյանքում շահեցնել ու բթացնել այնուեղ սովորող  
բանվորների վորդիներին։ չե վոր անհրաժեշտ  
եր նրանցից պատրաստել հայրենիքի ու հավատի  
համար հոժարական կովող քաղաքացիներ։ Բացի  
այդ, բուրժուազիան ստիլված եր տարեցտարի  
ավելացնել այն յերիտասարդ բանվորների և զու-  
ղացիների թիվը, վորոնք բանակ ելին կոչվում  
միլիտարիստական վերամշակման համար։

Քանի վոր ուժիորմիստական կուսակցություն-  
ներն ամենին չելին հոգում պրոլետարական  
յերիտասարդության մասին, այլ ընդհակառակը,  
ամեն կերպ աշխատում ելին խեղդել նրա մեջ  
ինքն իրան պաշտպանելու ամեն մի ձգուում, այդ  
պատճառով ինքնըստինքան առաջ յեկան առան-  
ձին, բարձրատեսակ ինքնուրուն պրոլետարական

յերիտասարդական կազմակերպություններ, վո-  
րոնք և դարձան ժամանակակից կոմիտատական  
միությունների նախորդները:

Դասակարգավիճ ինքնազիտակցության յեկող  
և արթնացող յերիտասարդ բանվորներն իրանց  
կաշվի վրա անմիջականորեն զգում են կապիտա-  
լիստական շահագործման ու ճնշումի հետևանք-  
ները: Նրանք բանվորական արտոնչալ արիտո-  
կրատիալի հետ վոչ մի ընդհանուր բան չունեին:  
Նրանց գիտակցությունը թունավորված չեր ու-  
փորմիտական յերկարամյա քաղաքականությամբ:  
Նրանք ամենին կապված չեն բուրժուական  
պետության ու նրա ապարատի հետ:

Գործարաններն ու ֆարբիկանները նոր մուտք  
գործած բանվորների այս նոր շերտերի առաջա-  
վոր մասի վրա պատերազմը, բնականաբար, ու-  
նեցավ ավելի անմիջական ազդեցություն, քան  
սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ու  
պրոֆմիությունների վրա:

Ռեֆորմիտական բարերոկրատիակի ստոր գա-  
վաճանությունը թեև ուժեղացրեց ձախակողման  
խմբակների ազդեցությունը կուսակցությունների  
և պրոֆմիությունների ներսում, բայց այդ ազ-  
դեցությանը ինթարկեց միմիայն մտածող բան-  
վորների փոքրաթիվ մասը, այսինչ պատերազմի  
նախորդներին գոյություն ունեցող պատահեկան

կազմակերպություններն ամբողջովին անցան ուղ-  
ղովիցիալի կողմը: Պատահնեկան կազմակերպու-  
թյուններին ուժորմիտական կուսակցություննե-  
րից բաժանող վիճը պատերազմի սկզբից գնալով  
ավելի ու ավելի սկսեց ճեծանալ: Պատահնեկան  
կազմակերպություններն սկսեցին ճետպհետե  
պիլի ու ավելի կազմակերպչորեն և քաղաքակա-  
նորեն ինքնուրույն միությունների բնույթ ըն-  
դունել: Յերիտասարդության ակտիվությունը,  
մասնավանդ պատերազմի ու միլիտարիզմի գեմ  
մղվող պայքարում, ավելի ուժեղացավ: Ամենուրեք  
յերիտասարդությունն սկսեց մասնակցել բանվո-  
րական շարժման տակտիկական հարցերի առթիվ  
առաջացած դիսկուսիային և ամենուրեք արտա-  
հայտվեց հոգուտ ձախակողման ոպավոզիցիոն  
խմբակների: Միջազգային պատահնեկան ամբողջ  
շարժումը բաժանվեց յերկու խմբերի՝ ինտերնա-  
ցիոնալիստաների և սոցիալ-պատրիոտների: Այս  
վերջին խմբին հարեց պատահնեկան կազմակեր-  
պությունների անհան մասը, վորը ճետպհետե  
սկսեց ավելի փոքրանալ և թուլանալ: Ինտերնա-  
ցիոնալիստական խմբերն ուժեղացնելով իրանց  
կազմակերպությունները, ձգուում են ստեղծել  
միջազգային մի կենտրոնական ղեկավար մարմին,  
վորի գերն ու նշանակությունը շատ ավելի խո-  
շոր պետք ե լիներ, քան հասարակ փոստարկու  
պարտականություն կատարելու:

Այս միջոցին, յերբ պատերազմը բոլորովին քայլալից հասակավոր բանվարների ինտերնացիոնալ և սկզբում բանվորական շարժման մեջ առաջ բերեց մի չտեսնված քառո, վորի միջից միայն հետագայում աստիճանաբար ծագեց նոր հեղափոխական ինտերնացիոնալը, պատանեկան կազմակերպությունները, ընդհակառակը, պատերազմի ազդեցությամբ սկսեցին առաջ գնալ իրանց միջազգային հեղափոխական միությունն ստեղծելու ճանապարհով։

Այս հանգամանքը վորոշակի նկատվեց 1915 թվի գարնանը Բերն քաղաքում գումարված պատանեկան կազմակերպությունների միջազգային միության առաջին կոնֆերենցիալի ժամանակ։ Այդ կոնֆերենցիան գումարվելու հարցը բարձրացրել ելին 1914 թվի աշնանը իտալիակի, Շվեյցարիակի և Սկանդինավիակի կազմակերպությունները։

Կոնֆերենցիային մասնակցում ելին տասն առանձին յերկրների բազմաթիվ անդամներ ունեցող միությունների 16 պատգամավոր։ Ներկայացված ելին իտալիակի, Բուլղարիակի, Շվեյցարիակի, Նորվեգիակի, Դանիակի, Հոլլանդիակի և Շվեյցարիակի սոցիալիստական յերիտասարդական ամենախոշոր կազմակերպությունները։ Ներկա ելին համարնական գերիտասարդական ամենախոշոր կազմակերպությունները։ Ներկա ելին հարցարկանիակի սոցիալիստական յերիտասար-

դության փոքրամասնության պատգամավորները և լեհական ու ռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչները։ Այս վերջին յերկու յերկրներում հատուկ պատանեկան կազմակերպություններ գոյություն չունելին, յերիտասարդությունը՝ միացած եր կուսակցության ըրջանակներում։ Բացի Գերմանիակից, Լեհաստանից և Ռուսաստանից, ընդամենը ներկայացված ելին 34000 կազմակերպված յերիտասարդանդամներուն կազմակերպություններ։ Մական կոնֆերենցիային մասնակցող կազմակերպությունների թվով չի սպառվում կոնֆերենցիայի սկզբանքներին համակիր կազմակերպությունների ցուցակը։ Շատ միություններ, վորոնք տեխնիկական կամ այլ պատճառներով չելին կարողացել ուղարկել իրենց ներկայացուցիչներին, հենց 1915 թվի ընթացքում իրանց համերաշխություններին հայտնում Բերնում ընդունված վորոշումներին։

Այս կոնֆերենցիան կարելի յե համարել կոմիտեիտական ինտերնացիոնալի ծննդվան որը, և նրա նշանակությունը գիտավորապես ընդունված վորոշումների մեջ չե։ Այդ վորոշումները գլխավորապես վերաբերում ելին յերկրորդական ու հատկապես կազմակերպչական հարցերին։ Զուտ քաղաքական խնդիրների վերաբերյալ դու-

յություն ուներ նույնիսկ վորոշ անորոշություն։  
Որինակ, այն հարցին, թե ինչ սկզբունքալին  
վերաբերմունք պետք է ունենալ դեպի պատե-  
րազմը, կոնֆերենցիալի մեծամասնությունը պա-  
տասխանեց լիակատար զինաթափման պահանջով։  
Կոնֆերենցիալի հիմնական եյությունն իր ար-  
տահայտությունը գտավ այն ճառերի մեջ, վորոնք  
մեկ անգամ ընդմիշտ վերջ ելին դառն պատանե-  
կան կազմակերպությունների չեզոք քաղաքակա-  
նությանը։ Կոնֆերենցիալի կողմից Կարլ Լիբենեխ-  
տին, Ռոզա Լյուքսենբերգուրդին և ուսական Պե-  
տական Դումայի հինգ բայցեկի պատգամավոր-  
ներին ուղարկած վողջուզններն աներկծիւ զուց-  
տվին, թե ում հետ ե զերադասում զնալ սոցիա-  
լիստական պատանեկան կազմակերպությունների  
միջազգային միությունը։

Կոնֆերենցիալի ամենակարեւը վորոշումն,  
անկասկած, սոցիալիստական պատանեկան կազ-  
մակերպությունների միջազգային քարտուղարու-  
թյուն ստեղծելն եր։ Քարտուղարության զլուխ  
անցավ ընկ. Մյունցենբերգը, վորը պատանեկան  
կազմակերպությունների ինքնուրույն քաղաքա-  
կան գործողությունների գաղափարի ջերմ պաշտ-  
պանը և նրա լեռանդուն առաջավոր մարտիկնե-  
րից մեկն եր։ Այն հարցերը, վորոնք չելին վճռվել  
երենի կոնֆերենցիայում, սկսեցին վճռվել

քարտուղարության կողմից։ Մոցիալիստական պա-  
տանեկան կազմակերպությունների միությունը  
սկսեց գործել վորպես միջազգային միասնական  
մի կազմակերպություն, վորն իր կազմի մեջ  
մանող բոլոր միություններից պահանջում եր  
անպայման մարտական կարգապահություն։ Նա  
կազմակերպեց միջազգային լախ կամպանիաների կ  
վորոշ դիրք ընդունեց միջազգային բանվորական  
շարժման բոլոր հարցերի վերաբերմամբ։

Միջազգային քարտուղարության գործունե-  
յությունը գժրախտաբար շուտով ընդհատվեց նրա  
քարտուղար ընկ. Մյունցենբերգի բանտարկու-  
թյան պատճառով։ Նրա հաջորդ ընկ. Տրոստլը  
նույնպիսի լեռանդ չունեցավ։ Միայն Գերմանիայի  
նոյեմբերյան հեղափոխությունից հետո, յերբ ընկ.  
Մյունցենբերգը բանտից ազատվեց, շարժումը նո-  
րից կենդանացավ։ Այդ ժամանակ յենթագրվում  
եր քարտուղարությունը տեղափոխել Գերմանիա։  
Սակայն Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական  
կառավարությունն իր վրա չափազանց մեծ հու-  
սեր զնող մարդկանց մի նոր գաժան դաս տվեց,  
նորից բանտարկելով քարտուղարության անդամ-  
ներին։ Քարտուղարության «Յերիտասարդական  
Խումենացիոնալ» որդանն ընդհատեց իր գործ  
թյունը, միության գեկավարությունը նորից ան-  
ցավ ժամանակավոր քարտուղար Տրոստլին։



ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԻՆՏԵՐ-  
ՆԱՑԻՈՆԱԼԻ ՀԱՄԱՐ

Մինչ այդ բոլոր յերկրներում հետզհետե ա-  
ճում եր միջազգային պրոլետարական պատասխ-  
կան շարժման հետագա զարգացման պահմանը:  
Պատերազմն ստեղծել եր սոցիալիստական պա-  
տասխական կազմակերպությունների միությունը:  
Հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և  
լայն մասսայական ընդհարումների բռնկումն ու-  
րիշ շատ յերկրներում ստեղծեցին հնարավորու-  
թյուն և կտրուկ պահմանը եին հեղափոխա-  
կան յերիտասարդության միջազգային կազմակեր-  
պության հետագա ուժեղացումն ու խտացումը:  
Վորովինետե ժամանակավոր կենարոնն այնքան ել  
յեռանդով չեր աշխատում նոր միջազգային կոն-  
ֆերենցիա գումարելու համար, վորի պահմանը  
առաջադրվում եր ամեն կողմից, այդ պատճառով  
միության մեջ մանող առանձին կազմակերպու-  
թյունները կոնֆերենցիա գումարելու նախաձեռ-  
նությունը վերցրին իրանց վրա:

Բերլինի, Հունգարիայի և Ռուսաստանի ըն-  
կերների ջանքերով 1919 թվի սպոսասովն վեր-  
ջապես գումարվեց կոնֆերենցիան, վորն ընտրեց  
ժամանակավոր կոմիտե: Ժամանակավոր կոմի-  
տելին հանձնարարվեց հրավիրել պատանեկան  
հեղափոխական կազմակերպությունների Միջազ-  
գային կոնգրեսս: Կոնֆերենցիային մասնակցում  
եին Ռուսաստանի, Գերմանիայի, Հունգարիայի,  
Լեհաստանի և Ավստրիայի յերիտամիությունների  
ներկայացուցիչները և Շվեյցարիայից ու Իտա-  
լիայից մեկական ներկայացուցիչ:

Ի՞նչ բնույթ պիտի կը եր ժամանակավոր կո-  
միտելի կողմից նախապատրաստվող միջազգային  
կոնգրեսը: Բերնի կոնֆերենցիան կիսապաշտո-  
նական բնույթ եր կրում: Ճիշտ է, 1907 թվին  
Շտուտգարտում կայացած յերիտասարդական սո-  
ցիալիստական կոնգրեսում ստեղծած սոցիալիս-  
տական պատանեկան կազմակերպությունների  
միջազգային միության մեջ մասող կազմակեր-  
պությունների մեծագույն մասն ընդունել եր  
Բերնի ծրագիրը և գործակցում եր միջազգային  
քարտուղարությանը, սակայն միքանի կազմա-  
կերպություններ բացասաբար և քննադատաբար  
եին վերաբերվում դեպի Բերնի կոնֆերենցիան:  
Զայներ եին լավում, թե առաջիկա՝ կոնգրեսը  
պետք է փորձի վերականգնել Յերիտասարդական

ինսերմացիոնարն իր հին ձեռվ, ալախնքն աճապես,  
ինչպես նա գոյսություն ուներ մինչ Բերնի կոն-  
ֆերենցիան:

Այս հարցը զուտ քաղաքական բնույթ կըող  
հարց եր: Միքանի կազմակերպություններ, վո-  
րոնք սպասողական գիրք ելին բանել դեպի Բեր-  
նի կոնֆերենցիան, դրա համար իրենց վորոշ  
քաղաքական հիմքն ունելին: Ուրեմն ինչ էելք  
կարելի յեր գտնել այդ քաղաքական տարածաշ-  
նությունները վերացնելու համար:

Դիեննայի կոնֆերենցիայում այս հարցը  
դրվեց շատ վորոշակի կերպով: Աստեղ տեղի ու-  
նեցավ մի յերեսույթ, վորը միջազգային պատա-  
նեկան շարժման հետագա զարգացման համար  
խոշոր նշանակություն ունեցավ,—այս հարցը վո-  
րոշելիս դեկավարող դերն անցավ ոռուսական  
կոմմոնլին: Ռուսական պատգամավորները պըն-  
դում եին, թե կոնգրեսսի հենց նախապատրաս-  
տական աշխատանքների միջոցին պետք է պարզ  
ու վորոշ կերպով սահմանվի իրենց քաղաքական  
գիծը: Այդ ահսակեալից նրանք պահանջում եին,  
վոր կոնգրեսսը պետք է լինի վոչ թե բոլոր պըն-  
դուստարական պատանեկան կազմակերպություն-  
ների միջազգային կոնգրեսս, այլ զուտ կոմմոն-  
լիստական պատգամավորության այս տակ-

ափկան, վոր տարրում եր կոմմոնլիստական Ին-  
տերնացիոնալի Գործադիր կոմիտեի հավանու-  
թյամբ, ողաշտապանություն եր գտնում Հունգա-  
րիայի, Ավստրիայի, Գերմանիայի և Լեհաստանի  
միությունների կողմից:

Այսպիսի տակախկա վարելը բացատրվում  
եր այն մեծ կարևորություն ունեցող անցքերով,  
վորոնք տեղի ունեցան միջազգային քարտուզա-  
րության գործունեցության ընդհատումից հետո  
(կապված Մյունցենբերգի բանարարկության հետ)  
պընդուստարական շարժման մեջ ընդհանրապես և  
պընդուստարական պատանեկան շարժման մեջ մաս-  
նավորապես:

Ռուսական հեղափոխությունը  
միջազգային բանվորական շարժման մեջ մեծ  
դիսկուսիա առաջացրեց: Դասակարգային ներ-  
գաշնակության և դասակարգային պատքարի, պըն-  
դուստարիատի դիկտատուրայի, դեմոկրատիայի և  
բուրժուական պետության և այլ պընդումները  
միանգամբ թերիական բնագավառից անցան  
գործնականի շրջանը ու այդ պատճառով պա-  
հանջում ելին գործնական վերաբերմունք: Պա-  
տերազմի վերջում ամբողջ Յեվրոպայում ծավալ-  
վող հեղափոխական ալիքն առաջադրում եր այդ  
բոլոր պընդումները վորպես ընթացիկ մոմենտի  
հրատապ հարցեր: Ռուսական հեղափոխության

հետ թե նրա դեմ, պրոլետարիատի դիկտատորւթափի հետ, թե նրան դեմ – ահա այն լողունզները, վոր բաժանում ելին բանվորական շարժումը յերկու բանակների: Յերկրորդ Ինտերնացիոնալի ներսում ձախակողման խմբակների ազգեցության ուժեղացումը վերջիվերջո հնարավորություն տվեց ստեղծելու ձախակողման թերի ինքնուրույն միասնական միջազգային մի կազմակերպություն:

Քանի վոր պատերազմի վերջանալուց հետո Յերկրորդ Ինտերնացիոնալը նորից շարունակում էր հավատարիմ մնալ իր հին սկզբունքներին, վորոնք հենց պատերազմի սկզբից նրան վարկաբեկել ելին, այդ պատճառով պրոլետարիատի հեկել ելին, այդ պատճառով պատերազմի մասնական ավանդարդն ուժեղանալով ստիպված եր մտածել III Ինտերնացիոնալ ստեղծելու մասին: Այսպիսով մարքսիզմի հեղափոխական սկզբունքներն իր գործունելության հիմք ընդունող III Ինտերնացիոնալը հակառակում եր իր հայրենի բուրժուազիայի հետ բարեկամացած սոցիալիստական կուսակցությունների քայլագած միջազգային միությանը – ահա այս հարցն եր, վոր դրված եր միջազգային բանվորական շարժման բոլոր հեղափոխական տարրերի տակածիկայի հիմքում: III Ինտերնացիոնալի հետ կամ նրա դեմ՝ ահա այս դժով ելին ընթանում միջազ-

գային բանվորական շարժման ուժերի վերջնական խմբավորումները:

Պատանեկան կազմակերպությունները, վորոնք պատերազմի ընթացքում այնքան վորոշակի արտահայտվել ելին իմպերիալիզմի ու սոցիալ-պատրիոտիզմի դեմ; չելին կարող այս դիմումայից գուրս մնալ: Նրանք նույնպես պետք են վճռելին այն հարցը, արդյոք կոմմունիզմի հետ են, թե նրա դեմ, III Ինտերնացիոնալի հետ են, թե նրա դեմ:

Եերնի միջազգային միության մեջ մտնող կազմակերպությունները, առանց սպասելու միջազգային քարտուղարության դիրեկտիվներին, այս հարցում միանգամայն վորոշակի դիրք ընդունեցին:

Ռուսաստանի պատանեկան կազմակերպությունները, վորոնք 1918 թվին, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո միացել ելին իբրև մի ինքնուրույն կենտրոնացած կազմակերպություն – Ռուսաստանի կոմմունիստական Յերիտասարդական Միություն անվան տակ, հարեցին բայց շնիկներին ու պրոլետարական հեղափոխության համար մղվող պայքարում նրանց հետ ելին:

Հունգարիայի յերիտասարդ սոցիալիստները 1918 թվի նոյեմբերին ստեղծեցին իրենց ազգային Բանվորական Յերիտասարդական Միությու-

նը, վորն անմիջապես ոպպողիցինն դիրք՝ բռնեց գեղի Հունգարիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, ու Երբ Հունգարիայում կոմմունիստական կուսակցություն ստեղծվեց, ընդունեց նրա ծրագիրը: Հունգարիայի կազմակերպված յերիտասարդ բանվորները կոմկուսակցության հետ միասին դուրս ելին գալիս կապիտալիզմի դեմ ու ակտիվ մասնակցում ելին պրոլետարիատի իշխանության համար մղվող պայքարին: Պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում Միությունն ընդունեց «Կոմմունիստական Պրոլետարական Յերիտասարդական Միություն» անունն ու դրամակ Հունգարիայի յերիտասարդ բանվորության միակ կազմակերպությունը՝ 120.000 անդամով:

Գերմանիայում սոց.-դեմոկրատական պատահնեկան կազմակերպությունների շարքերում առաջ եր յեկել անլեգալ ոպպողիցիա, վորը հարելով Բերնի ծրագրին, ընդունել եր «Գերմանիայի Սոցիալիստական Յերիտասարդության Ազատ Միություն» անունը: Այս միության անդամները սպարտականների հետ միասին կողք-կողքի կովում ելին Բերլինի և Մյունխենի փողոցներում: 1919 թվի սեպտեմբերին միությունը բացարձակ կերպով ընդունեց III ինսերնացիոնալի գերմանական սեկցիայի՝ սպարտականների ծրագիրը:

Ավստրիայում Բանվորական Յերիտասարդության Միության սպառողիցինն մասը, վոր սկզբում հրաժարվել եր Բերնի կոնֆերենցիային մասնակցելուց, հեռացավ միության շարքերից, ստեղծեց կոմմունիստական Յերիտամիություն և 1919 թվի ոգոստոսին ընդունեց կոմինտերնի ծրագիրը:

1919 թ. Հոումում գումարված լոտալական սոցիալիստական պատանեկան կազմակերպության ազգային կոնգրեսը միաձայն վորոշեց միանալ կոմինտերնի հիմնական սկզբունքներին:

Նման վորոշումներ ընդունեցին նաև Շվեյցարիայի և Նորվեգիայի սոցիալ-դեմոկրատական յերիտամիություններն իրենց կոնգրեսներում:

Ֆրանսիայի սոցիալիստական յերիտասարդության կոնգրեսով 1919 թվի ասպրիլին հատուկ բանաձեռվ արտահայտվեց հոգուտ Հունգարիայի և Ռուսաստանի Խորհրդային հանրապետությունների:

Զեխո-Սլովակիայում, Ռումինիայում, Դանիայում և Սլավանիայում սոցիալիստական յերիտասարդական միությունների նշանակալի փոքրամասնությունները նույնպես հարեցին III Ինտերնացիոնալի ծրագրին:

## ԲԵՐԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ

Այս բոլորը չեցին կարող ազդել այն հարցի վրա, թե ինչ ընուզթ պետք է կը եր պրոլետարական պատմանեկան կազմակերպությունների նախապատրաստվող կոնգրեսը:

Սոցիալիստական պատմանեկան կազմակերպությունների միության մեջ մասնող կազմակերպությունների ձնշող մեծամասնությունը հատուկ բանաձևերով արտահայտվել եր արդեն այդ հարցի առթիվ։ Նրանք պատրաստ եցին գնալու կոմինտերնի հետ միասին։ Կոնգրեսը կարող եր լինել միմիայն կոմմոնիստական կոնգրես, վորը և պիտի ստեղծեր կոմմոնիստական Յերիտասարդության իստերնացիոնալ:

Այս տեսակետը, ինչպես արդեն հիշվեց, պարզորոշ կերպով պաշտպանում ելին ոռուսական պատգամավորները նախնական կոնֆերենցիալում։ Այս տեսակետին հակառակ եր միջազգային միության քարտուղար ընկ. Մյունցենբերգը, վորը տակտիկական նկատառությունվագի անհրաժեշտ

եր գտնում կոնգրեսուին մասնակցելու հրավիրել Ավստրիայի Բանվորական Յերիտասարդության Միությունը, վորը ավստրական սոց.-դեմոկրատական կուսակցության ազդեցությամբ թշնամական դիրք եր բունել դեպի Խ Խնտերնացիոնալը։

Կոնգրեսի գումարման նախնական աշխատանքները կատարող ժամանակավոր կոմիտեն վերջիվերջո միացավ ոռուսական պատգամավորության տեսակետին, և Ավստրիայից կոնգրեսուին մասնակցելու հրավիրվեց միմիայն Ավստրիայի կոմմոնիստական Պրոլետարական Յերիտասարդության Միությունը։

Հաղթահարելով բաղմաթիվ արգելքներ, 1919 թ. նոյեմբերին վերջապես սկսվեց այդքան յերկար ժամանակ նախապատրաստվող կոնգրեսը։

Կոնգրեսին մասնակցում ելին 14 պրոլետարական պատմանեկան կազմակերպությունների 19 ներկայացուցիչ։ Այդ կազմակերպությունները մեծ մասամբ իրենց յերկների յերիտասարդական միակ կազմակերպություններն ելին։

Կոնգրեսուին մասնակցում ելին՝ Ռուսաստանի կոմիտատական Միությունը, Պավոլժեկի Գերմանական Մարզի կոմիտատական Միությունը (այն ժամանակ դեռ չեր մտնում Համեկամ-ի), Ավստրիայի կոմմոնիստական Պրոլետարադեջ),

կան Յերիտասարդության Միությունը, Լեհաստանի, Հունգարիայի, Շվեյցարիայի և Գերմանիայի Կոմմունիստական Յերիտամիությունները, Իտալիայի, Ռումինիայի և Սպանիայի սոցիալիստական յերիտասարդությունը, Նորվեգիայի, Շվեյցիայի և Դանիայի սոցիալ-դեմոկրատական յերիտասարդական միությունները և, վերջապես, Զեխիայի սոցիալ-դեմոկրատական յերիտամիության Կադնենի շրջանավն կազմակերպությունը: Բերնի ծրագիրն ընդունող կազմակերպություններից բացակայում ելին միայն Ֆրանսիայի և Ամերիկայի սոցիալիստական յերիտասարդությունը, Բոլգարիայի սոցիալ-դեմոկրատական յերիտամիությունը և Հոլլանդիայի «Սերմնացան» միությունը, վորոնք չելին կարողացել ուղարկել իրենց ներկայացուցիչներին զանազան տեխնիկական պատճառներով: Կոնգրեսսին մասնակցելու չելին հրավիրված Գերմանիայի, Հոլլանդիայի և Շվեյցիայի սոցիալ-պատրիոտական յերիտամիությունները, վորոնք առնասարակ յերբեք, նույնիսկ պատերազմից առաջ ել, չելին մտնում միջազգացին միության մեջ: Հրավիրված ելին, բայց իրանց ներկայացուցիչներին չելին ուղարկել Ավստրիայի նախկին բանվորական յերիտասարդության միության չեխտական մտար և բելգիական «Յերիտասարդ Գվարդիա» կազմակերպությունը:

Կոնգրեսսին մասնակցում ելին իրանց շարքերում 200.000-ից ավելի կազմակերպված լեռնիտասարդ բանվորություն ունեցող սոցիալիստական և կոմմունիստական պատանեկան միություններ:

Հենց ակզրից կոնգրեսսն սկսեց զքաղվել քաղաքական պալքարին վերաբերող հարցերի քննությամբ: Նա իր սկզբնական ինդիքս եր համարում դիրոշ զիրք բռնել այն խոշոր պլրոբեմների վերաբերմամբ, վորոնք այն ժամանակ հետաքրքրում ելին ամբողջ բանվորությունը: Ոգնել կոմինտերնին նրա պալքարում և նրան կողմնակից դարձնել ուժեղ և քաղաքականապես վորոշ զիրք ունեցող պատանեկան կազմակերպությունները — ահա կոնգրեսսի առաջին անելիքը:

Քանի վոր սոցիալիստական պատանեկան կազմակերպությունների միջազգացին միությունը կազմված եր կենտրոնացած և սերաորեն միացած կազմակերպություններից, իսկ կոմինտերնը դեռևս հենվում եր զիսավորապես առանձին յերկրուների փոքրիկ խմբակների ու հոսանքների վրա, կոնգրեսսը վորոշեց, վոր նոր կոմմունիստական Յերիտամիության ինտերնացիոնալի մեջ մտնող միությունները պրոպագանդ մղեն հոգուտ III ինտերնացիոնալի զաղափարի վոչ թե մենակ յերիտասարդ բանվորների, այ և ամբողջ պրոլետարիտափակ շարքերում:

Իհարկե, իր խոշոր պատմական խնդիրները կատարելու համար յերիտասարդ՝ Շխան Խնտերնացիոնալը չեր կարող սահմանափակվել իր ազգեցությունը տարածելով միայն այն պատանեկան միությունների վրա, վորոնք իրենք արդեն դառել ելին ճանապարհը գեղի կոմինտերն։ Նրանց շարքերից դուրս մնում ելին դեռ հազարավոր յերիտասարդ բանվորներ, վորոնք դեռ բանվորական շարժման հիմնական հարցերի վերաբերմամբ վորոշ յեղակացության չելին յեկել, իսկ մի մասն ել գտնվում եր դեռ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների և սոցիալ-դեմոկրատական բյուրոկրատների ազգեցության և խնամակալության տակ։ Զեխո-Սլովակիայում, Ֆրանսիայում, Դանիայում, Բելգիայում, Հարավ-Սլավիայում և ուրիշ շատ յերկրներում արդեն լսվում ելին հեղափոխական փոքրամասնությունների ձախներն ընդդեմ սոցիալ-պատրիոտական և տատանվող գեկավարների։ Կոնդրեսսը պետք ե ծրագիր մշակեր, վորի հիման վրա կարելի լիներ միացնել բոլոր այդ տարրերին հանուն կոմինտերնի համար մղվող պայքարի։

Մի խնդիր ևս գրված եր կոնդրեսսի առաջ. հեղափոխական պատանեկան շարժման բոլոր ուժերը դեռ բոլորովին միացած չելին։ Բերնում ստեղծված միջազգային միությունը Շտուտգարտի

ազգակենտրոնացած Խնտերնացիոնալի համեմատությամբ մի նշանավոր քայլ եր զեղի առաջ։ Իր պապակա մեծ պաքարի համար միջազգային պատանեկան շարժումը պետք ե ստեղծեր մի կենտրոն, վորը կարողանար ղեկավարել նրա ամբողջ գործունեյությունը մի միասնական ծրագրով։ Այդ խոշոր խնդիրների առաջ զուտ պատանեկան խնդիրները պետք ե տեղի տալին։ Կոնդրեսսը հենց սկզբից պարզ կերպով գրեց իր առաջ այդ խընդիրները։ Այդ յերեսում ե ընկ. Մյունցենբերգի այն խոսքերից, վորով նա բացեց կոնդրեսսը.

«Ներկա կոնդրեսսը պետք ե վճռի պըոլետարական պատանեկան շարժման պատմության համար լուրջ ու նշանակալից մի շարք խնդիրներ, առաջին հերթին և գլխավորապես քաղաքական նշանակություն ունեցող խնդիրներ։ Գործը վերաբերում ե մեր վերջին տարիների տակտիկայի նվաճումների, պատերազմի գեմ մղվող հակամիկատարիստական հեղափոխական պաքարի կիրառմանը ներկա մոմենտի հեղափոխական շրջանում։ Բավական չե, վոր մենք ինքնուրուցն քաղաքական կազմակերպության դիրք բռնենք մեր կազմակերպությունների համար առանձնապես կարևորություն ունեցող խնդիրների լուծման վերաբերմամբ, վորպիսիք են հակամիկատարիստական պըոպագանիզմայի զարգացումը, լուսավո-

ստկան աշխատանքների վերակազմությունը, փոքրահասակների աշխատանքի հարցերը և այլն:

«Աս բոլորից բացի, մենք պետք ե զբաղվենք ընդհանուր քաղաքական գրության քննությամբ, ինչպես այդ արինք Բերնում 1915 թվին։ Մենք պարտավոր ենք առենայն լրջությամբ և գիտակցաբար կատարել այն բոլորը, ինչ պահանջում ե մեղմից պրոլետարական հեղափոխությունը ներկա մոմենտում։ մենք պետք ե կենսազործենք մեր առանձին կազմակերպությունների նվաճումները և այն բոլորը, ինչի ձգուում ենք. անհրաժեշտ ե միաբանել պրոլետարական հեղափոխության մարտիկների, Ռուսաստանի Խորհրդավին Հանրապետության հետ, Նրանից հետո, յերբ մեր աշխատանքի բոլոր հարցերը գործնականապես կկարգավորվեն, մենք պետք ե պաշտոնապես իրականացնենք մեր միացումը III ինտերնացիոնալի հետ»։

Եվ իսկապես, վիճաբանությունների մեջ հիմնական տեղը զբավեց ընդհանուր քաղաքական գրության և հեղափոխական պրոլետարիատի ընդհանուր խնդիրների քննությունը։ Աս վերաբերում ե վոչ միայն որակարգի մեջ զրկած ընդհանուր քաղաքական գրության հարցին, այլև Կոմմունիստական Յերիտմիությանը վերաբերող սկզբունքային և քաղաքական պրոբլեմների վի-

ճարանությաններին։ Բնորոշ ե այն հանդամանքը, զոր նույնիսկ հատկապես պատանեկալի թյան վերաբերող այնպիսի հարցում, ինչպիսին ե, ուրինակ, գաստիարակչական աշխատանքների հարցը, այն միտքն եր արտահայտվում, թե այդ ըրջանում վոչ մի խոսք չի կարող լինել հասուկ գաստիարակչական աշխատանքների մասին։

Ճիշտ այդպես ել Կոմմունիստական Յերիտառարգության ինտերնացիոնալի ծրագրի մասին ընդունված բանաձեի մեջ, վորը հետազոտմէի Մ.-ի պլատֆորման դարձավ, հիմնական մոմենտը սկզբունքային քաղաքական գեկարացիան եր։

Այդ բանաձեի 4 և 5 կետերն են, վորոնց շուրջը հետազոտում, հեղափոխական բանվոր յերիտասարգության, վոր գեռ յերիտասարգության ցենտրիստական միությունների մեջ եր, նվաճման համար մղվող կոմիտեամանակ կատաղի վիճաբանություններ տեղի ունեցան։

«Բանվոր յերիտասարգությունը, — ասված ե ծրագրի այդ կետերում, — պրոլետարիատի ամենաակտիվ և ամենահեղափոխական մասն ե։ Կոմմունիստական պատանեկան կազմակերպության ամենազլիավոր խնդիրներն են՝ անդադար քաղաքական պրոպագանդ մղել յերիտասարգության մասսաներում, կազմակերպել և իրականացնել քաղաքական յելութներ, անմիջական կոիկ

մղել կոմմունիզմի համար, մամնակցել կապիտալիստական իշխանության տալալման գործին, դաստիարակել յերիտասարդությունը կոմմունիստական հասարակության շինարարության համար։

«Կոմմունիստական պատաճեկան կազմակերպությունները յեռանդուն կոփվ են մզում բոլոր բուրժուական կուսակցությունների, ինչպես և բուրժուազիայի ակներեւ լակել աջակողման սոցիալիստների դեմ։ Ապա՝ սոցիալիստական կենտրոնի դեմ, վորը իր յերերուն քաղաքականությամբ պաշտպանում ե կապիտալիստական հասարակակարգը... Նույնպիսի պալքար պետք ե մղել նաև վերեւ հիշված կուսակցություններին հարող բոլոր պատաճեկան միությունների դեմ։ Իրանց քաղաքական կովում պատաճեկան կազմակերպությունները պետք ե գործեն իրանց յերկրների այն կուսակցությունների կամ ֆրակցիաների ծրագրով, վորոնք միացած են III Ինտերնացիոնալին կամ պետք ե ընդունեն կոմմունիստական Յերիտասարդության Ինտերնացիոնալի ծրագիրը»։

Կոնգրեսոն իր գլխավոր և կարևոր խնդիրներից մեկն եր համարում կոչ անել բոլոր կազմակերպված յերիտասարդ քանվորներին իրագործելու ծրագրի հենց այս մասը։

«Յերբ բոնկվեց պատերազմը, — ասված ե

կոնգրեսսի հրատարակած մանկֆեստում, — անամոթ դավաճանները ձգեցին ինտերնացիոնալը բախտի բերմունքին։ Նրանք կապիտալիստական պետությունների հետ խայտառակ քաղաքացիական հաշտություն կնքելով, բանվորական մասսաներին վաճառեցին գեներալներին և ժողովրդի դահիճներին։ Լիակատար լքումի և պրոլետարիատի անփառունակ ստորացման այդ որերին գուք, յերիտասարդ ընկերներ, առաջինը կոչ արիք միջազգային կոնֆերենցիա գումարելու և իրականացրիք այն 1915 թվին Բերնում։ Յերիտասարդական ինտերնացիոնալի լոգունգներին հավատարիմ գուք հեղափոխական կոփվ հայտարարեցիք պատերազմին և բարձրացրիք ինտերնացիոնալի դրոշակը խրամատների, բոլոր մարտադաշտերի և մասսայական գերեզմանների վրա...»

«Ընկերներ։ Սոցիալիզմի իրականացման համար մղվող հեղափոխական պայքարի ներկա շրջանը ձեզանից ե՛լ ավելին և պահանջում։ Այժմ հարկավոր ե մեր նախընթաց հեղափոխական տակտիկայի նվաճումը կիւտոել տվյալ ժոմինտի քաղաքական կովում...»

«Մեր սերնդի պատմական խնդիրն ե, ընկերներ, իրականացնել պրոլետարական հեղափոխությունը յեզ ձեռնարկել կոմմունիստական հասարակության շինարարությանը։

«Ամեն ինչ զլսավորապես կտխված ե մեր վճռականությունից, մեր մարտական յեռանդից ու միաբանությունից։ Մենք պետք ե վճռականապես գնանք պլողետարական մարտիկների հետ և կոմիտերնի ծրագրով։

«Կոնզընեսը դիմում ե բոլոր պլողետարական պատանեկան կազմակերպություններին ու նրանց բոլոր առանձին խմբերին յեզ անդամներին ու կոչ անում հետեւել Յերիտասարդական հնտերնացիոնալի որբնակին յեզ կանզնել Բերնում մշակված հիմնական սկզբունքների պլատֆորմայի վրա, սերտ մարտական կապ պահպանել Կոմմունիտական Ինտերնացիոնալի հետ, անողոք կոիվ մղել պլողետարական հեղափոխության, պլողելետարիատը զիկտասուրայի, կոմմունիտական հասարակության համար ընդդեմ բուրժուական թշնամիների, ընդդեմ հայունի ու զաղանի սոցիալ-պատրիոտների, ընդդեմ Շալդեմանի, Եբերակի, Ռենոդելի, Հենդերսոնի, Թուդարի, Ռենների, Առևսակերլիցի, Միակիսոսի, Բրանտինգի, Գրեյլիսի, Գոմպերսի, ինչպես և ընդդեմ Կառուցկու, Բառերի, Ռոբերտ Գրիմմի և նրանց յերիտասարդական միությունների։

«Կոնզընեսը կոչ ե անում յերիտասարդ բանվորներին թոթափել իրանցից քաղաքական անտարբերությունը, յերես գործնել բուրժուա-

գիալի սոցիալ-պատրիոտ սաների միություններից և միանալ իրենց յերկրների հեղափոխական պատանեկան միություններին, իսկ այսուեղ, վորտեղ չկան այդպիսիները, ձեռնարկել նրանց ստեղծմանը»։

Պատանեկան հեղափոխական կազմակերպությունները կատարյալ իրավունք ունեին այդպիսի հպարտությամբ խոսելու։

Այն ժամանակներում պատանեկան կազմակերպությունները կազմակերպարկան շատ ու շատ յերկրներում միակ կազմակերպություններն ենին, վոր ամբողջովին պակարում ենին պլողետարական հեղափոխության համար։

Իրանց գոյության և մղած պակարի պատմական նշանակության արդ հպարտ զիտակցությունն եր, վոր թելազրում եր պատգամավորներին նաև ծրագրի այն մասը, վորի մեջ սահմանվում ենին պատանեկան կազմակերպությունների և կուսակցությունների փոխհարաբերությունները։

«Կազմակերպչական փոխհարաբերությունները կուսակցության հետ վորոշվում են յերկու հիմնական սկզբունքսկ. 1) յերիտասարդության ինքնուրույնությամբ, 2) սերտ կոնտակտով և փոխազարձ պաշտպանությամբ»։

Այս ձեռակերպման մեջ կարելի յէ նկատել

«Ամեն ինչ զլսավորապես կախված է մեր վճռականությունից, մեր մարտական յեռանդից ու միաբանությունից։ Մենք պետք ենք վճռականապես գնանք պրոլետարական մարտիկների հետ և Կոմինտերնի ծրագրով։

«Կոնգրեսսը դիմում է քողոք պրոլետարական պատանեկան կազմակերպություններին ու նրանց քողոք առանձին խմբերին յեվ անդամներին ու կոչ անում հետեւել Յերիտասարդական Խնտերնացիոնալի որինակին յեվ կանգնել Բերնում մշակված հիմնական սկզբունքների պլատֆորմայի վրա, սերտ մարտական կապ պահպանել Կոմմունիտարական Ինտերնացիոնալի հետ, անողոք կոփվ մղել պրոլետարական հեղափոխության, պրոլետելետարիատի դիկաստուրալի, կոմմունիտարական հասարակության համար ընդդեմ բուրժուական թշնամիների, ընդդեմ հայտնի ու գաղտնի սոցիալ-պատրիոտների, ընդդեմ Շայդեմանի, Եբերտի, Ռենոդելի, Հենդերսոնի, Թուլզարի, Ռենների, Առևտերլիցի, Միակիտոսի, Բրանտինգի, Գրեյլիսի, Գոմպերսի, ինչպես և ընդդեմ Կառուկու, Բառերի, Ռոբերտ Գրիմմի և նրանց յերիտասարդական միությունների։

«Կոնգրեսսը կոչ է անում յերիտասարդ բանվորներին թոթափել իրանցից քաղաքական անտարբերությունը, յերես դարձնել բուրժուա-

զիալի սոցիալ-պատրիոտ սաների միություններից և միանալ իրենց յերկրների հեղափոխական պատանեկան միություններին, իսկ այնուեղ, վորտեղ չկան այդպիսիները, ձեռնարկել նրանց ստեղծմանը»։

Պատանեկան հեղափոխական կազմակերպությունները կատարյալ իրավունք ունեցին այդպիսի հպարտությամբ խոսելու։

Այն ժամանակներում պատանեկան կազմակերպությունները կապիտալիստական շատ ու շատ յերկրներում միակ կազմակերպություններն ենին, վոր ամբողջովին պայքարում ենին պրոլետարական հեղափոխության համար։

Իրանց գոյության և մղած պայքարի պատմական նշանակության այդ հպարտ գիտակցությունն եր, վոր թերապեում եր՝ պատգամավորներին նաև ծրագրի այն մասը, վորի մեջ սահմանվում ենին պատանեկան կազմակերպությունների և կուսակցությունների փոխհարաբերությունները։

«Կազմակերպչական փոխհարաբերությունները կուսակցության հետ վորոշվում են յերկու հիմնական սկզբունքսկ. 1) յերիտասարդության ինքնուրույնությամբ, 2) սերտ կոնտակտով և փոխազարձ պաշտպանությամբ»։

Այս ձեստերապման մեջ կարելի յէ նկատել,

թերեւ, վորոշ անվատահություն գեղի այն կուսակցական խմբերը, վորոնք այն ժամանակ արդեն միացել ելին Կոմինտերնին։ Յեվ իսկապես, այն շրջանում հեղափոխական ալիքը Կոմինտերն բերեց շատ տարրերի, վորոնք հետագայում, յերբ գրությունը բարդացավ, նորից անցան սոցիալգեմոկրատիայի բանակը։ Ճշգրիտ բնազդը թելագրում եր յերիտասարդությանը իրան այդպիսի տարրերի տիրապետությունից պաշտպանելու ցանկությունը։

Սակայն պատգամավորները, այնուամենայնիվ, պարզ գիտակցում ելին, վոր իրանք պարտավոր են ունենալ լիակատար և անվերապահ վստահություն դեպի Կոմմունիստական Ինտերնացիոնալը։ Յերիտասարդական Ինտերնացիոնալը Կոմինտերնի «յեղալրական կազմակերպություն» հայտարարելու փորձերը յետ մղվեցին, և ճնշող մեծամասնությունը արտահայտվեց հոգուտ այն մտքի, վոր Յերիտինտերնացիոնալը մտնում է Կոմինտերնի մեջ վորպես նրա սեկցիա։ Նոր Յերիտինտերնացիոնալի գուտ քաղաքական-խընդիրների այդպիսի ընդգծումը չխանգարեց այն բանին, վոր նրա նոր ծրագրի մեջ (այդ ծրագիրն առհասարակ առաջին ծրագիրն եր, վոր պրոլետարական յերիտասարդությունն ընդունում եր միջազգային մասշտաբով) իրենց տեղը գտան

նոր գուտ պատահնեկան իննովիբները։ Աշխատանքի բոլոր ձևողերը, վորոնց վրա այժմ ընկած են միջազգային պրոլետարական պատահնեկան շարժման ծանրության կենտրոնները, վորոշակի ցուց ելին տրված Բերլինի ծրագրի մեջ, այնտեղ վորոշակած ելին առաջիկա աշխատանքին վերաբերող բոլոր հիմնական գծերը։

Ինտերնացիոնալի աշխատանքները զեկավարելու համար կոնգրեսան ընտրեց հինգ հոգուց բաղկացած մշտական Գործադիր Կոմիտե (յերկու գերմանացի, մեկ ռուս, մեկ սկանդինավցի և մեկ ներկայացուցիչ ոռմանական յերկրներից)։ Սա ևս մի կարևոր նորություն եր։ Այս վորոշումով կոնգրեսան ընդգծում եր, վոր Ինտերնացիոնալի կենտրոնը պետք է լինի վոչ թե առանձին միությունների թղթակցությունների փոխանակության մի վայր, այլ իսկական միջազգային զեկավար որգան, վորն առանձին միությունների կատարած գործերի և փորձերի հաշվառման միջոցով ապահովեր կարևոր յերկրների ներկայացուցիչների մշտական համագործակցությունը։

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՎՐԴԱԿԱՆ ԻՆՏԵՐ-  
ՆԱՑԻՈՆԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Նորընտիր Գործադիր Կոմիտեն իր աշխա-  
տանքն սկսեց շատ ծանր պարմաններում: Միջին  
յեվրոպական յերկրներում տիրում եր դաժան  
ռեակցիան: Կոմմունիստական կուսակցություն-  
ներն այնտեղ աշխատում ելին անլեզար պարման-  
ներում: Բոլոր սահմանները խիստ պահպանվում  
եին: Արտասահման գնալու համար անշագիր  
ստանալը համարյա անկարելի յեր դարձել նույն-  
իսկ հասարակ քաղաքացիների, ուր մնաց փոստի-  
կանությանը հայտնի մեր հեղափոխական ընկեր-  
ների համար: Փոստն ստուգվում եր և քննության  
եր լենթարկվում: Բուսաստանն ողակված եր  
ամեն կողմից: Կապը Մոսկվայում գտնվող Կոմին-  
տերնի Գործկոմի հետ չափազանց դժվարացել եր:

Վորոշված եր Յերիտինտերնացիոնալի Գործ-  
կոմը թողնել Բերլինում: Այս հանգամանքն այն  
ժամանակա պայմաններում մի կողմից հեշտա-  
ցնում եր, բայց մյուս կողմից ել դժվարացնում  
եր Գործկոմի աշխատանքը:

Հեշտացնում եր, վորովհետև Բերլինից շատ  
ավելի հեշտ եր հաղթահարել այն դժվարություն-  
ները, վորոնք անխուսափելի ելին առանձին  
յերկրների կազմակերպությունների հետ կապ  
պահպանելու գործում, իսկ դժվարությունը նրա  
մեջ եր, վոր համաշխարհային կոմմունիստական  
շարժման կենտրոնի, Մոսկվայի հետ կապ պահ-  
պանելը բացառիկ դժվարություններ եր առաջա-  
ցնում:

Այլ պարմաններում ԿիՄ-ի Գործադիր Կոմի-  
տեի հեռափորությունը Կոմինտերնի Գործկոմից  
կարող եր վորոշ չափով վտանգավոր լինել: Մենք  
հետազուում կտեսնենք, վոր այլպիսի վտանգ  
իսկապես առաջ յեկավ: Ակզենական շրջանում,  
սակայն, քաղաքական հարցերն այնքան պարզ  
եին ու հասարակ, վոր քաղաքական տարածայ-  
նությունների վոչ մի առիթ չկար: Շարժման  
առաջ այն ժամանակ գրված եին միայն զուտ կազ-  
մակերպչական և պրոպագանդիստական խնդիրներ: Այդ  
ագիտացիայի և պրոպագանդայի հիմնական  
գիծն արդեն վորոշված եր Կոմինտերնի առաջին  
կոնգրեսսի կողմից ընդունած սկզբունքներով:  
Տակտիկական պրոբլեմներ, վորպիսիք այժմ  
կանգնած են Կոմինտերնի առաջ, այն ժամանակ  
միայն հազիվ նշանակում ելին:

Յերիտինտերնացիոնալի Գործկոմի Բերլինում

զանվելու դրական կողմերից մեկն ել այն եր, վոր վերջիվերջո նա ոգտավետ յեղալ նաև կոմինտերնի համար: Կոմինտերնի Գործկոմը յեփրոպական յերկրներից շատերի և նույնիսկ Անդիալի և Ամերիկայի կոմմունիստական կուսակցությունների և խճակների հետ իր կապերը պահպանում եր ԿիՄ-ի Գործկոմի ստեղծած ապարատի միջոցով: Այդ գործում ողնում ելին այն յերիտասարդ ընկերները, վորոնք պատերազմի շրջանում անկշղալ աշխատանքի վորձ ելին ձեռք բերել:

Նորընտիր Գործկոմի գործունելությունը նախ և առաջ սկսեց տարածվել յերկու ուղղությամբ. պայքար՝ կոմինտերնի զիծն անցկացնելու բանվորական շարժման մեջ առնասարակ և պայքար՝ Բերլինի ծրագրին չմիացած յերիտամիություններին գրավելու համար:

Յեփրոպական յերկրներից շատերում ԿիՄ-ի կազմի մեջ մտնող կազմակերպությունները մեծ աջակցություն ելին ցուց տալիս կոմինտերնին: Ֆրանսիայի, Իտալիայի, Չեխո-Սլովակիայի, Շվեյցարի, Նորվեգիայի և Շվեյցարիայի կազմակերպությունները խոշոր պիտացիան կուսակցությունների շարքերում հոգուտ ԱՀ Խնտերնացիոնալի:

Պատանեկան կազմակերպությունների մեծ թվով ակտիվ աշխատավորներ գործակցում ելին

առանձին կուսակցությունների ուսուցիչներ տարբերի հետ և հետագայում մասնակցեցին նոր ստեղծվող կոմմունիստական կուսակցությունների աշխատանքներին: Դանիայում, Սվանիայում և Բելգիայում հենց պատանեկան կազմակերպություններն ստեղծեցին կոմմունիստական կուսակցությունների իրանց լավագույն ուժերը նրանց հանձնելու միջոցով: Այժմ ել բոլոր կոմկուսակցությունների շարքերում կարելի յե գտնել զեկավարող ընկերներ, վորոնք հարել են կոմինտերնին դեռ կոմկերիտական կազմակերպությունների շարքերում յեղած ժամանակի:

Նոր Գործկոմի գործունելության աջքի ընկնող հաջողություններից մեկը կոմյերիտական Խնտերնացիոնալի անսպասելի արագ կազմակերպչական լայնացումն և ուժեղացումն եր: Կոնգրեսսի պատգամագրոների իրանց յերկրները վերադառնալուց միքանի ամիս հետո Գործկոմին, անձնական կապերի կամ գրագրության միջոցով, հաջողվեց մշտական կապ ստեղծել Բերլինի կոնգրեսսում իրանց ներկայացուցիչները չունեցող շատ կազմակերպությունների հետ, վորոնք հետագայում միացան ԿիՄ-ին: Այսպես, որինակ, Լիտվայի և Ֆինլանդիայի կազմակերպությունները միացան ԿիՄ-ին դեռ 1919 թվին, նույնը և Բոլգարիայի, Ռումինիայի, Հունաստանի և Սլո-

վակիալի կազմակերպությունները։ ԿիՄ-ին միացան նաև Անդիալի զանազան պատաճական խմբակները, վորոնք հետո միանալով՝ ստեղծեցին մեկ միություն։

Այնուհետև մի շարք յերկրներում հաջողվեց ստեղծել բոլորովին նոր կազմակերպություններ։ Սրա համար ԿիՄ-ը կարողացավ ոգտագործել առաջներում գոյություն ունեցող, բայց պատերազմի ընթացքում քայլայված միությունների մնացորդները, ինչպես, որինակ, Հարավային Ամերիկայում, նույնպես և հեղափոխական ուսանողության վորոշ խմբերին։ Նոր կազմակերպություններ ստեղծվեցին Հարավ-Արևիայում, Լատվիայում, Անդիայում, Արգենտինայում և Մեքսիկայում։ Նոր կազմակերպությունների շարքում առանձին տեղ եցին գրավում ասիսական յերկրներում ստեղծված միությունները, վորոնց մեջ աշխատանքը եր տանում ուռւսական կոմսոմոլը։ Իր աշխատանքը թեթևացնելու նպատակով Գործկոմն ստեղծեց մի շարք յենթաքարտուղարություններ, յերեքը Յեվրոպայում (Հարավ-Արեվելյան քարտուղարություն Բալկանյան յերկրների համար Վիեննայում, Ռոմանական քարտուղարություն Բագելում և Սկանդինավական քարտուղարություն Ստոկհոլմում)։ Բացի այդ հատուկ քարտուղարություն ստեղծվեց ասիսական յերկրների

համար Մոսկվայում։ Այս Արևելյան քարտուղարությունն աշխատում եր Բուխարայում, Տաճկաստանում, Հայաստանում, Պարսկաստանում, Չինաստանում, Կորեայում և Մոնղոլիայում։ Այս վերջին յերեք յերկրներում գեռ այն ժամանակ հմաք դրվեց յերիտմիութենական կազմակերպություններին, վորոնք ներկայում անքան ուժեղացել և ամրացել են։

Գործկոմի աշխատանքների ամենից ավելի հետաքրքրական և կենդանի մասը կազմում եր այսպես կոչված ցենտրիստական տատանվող յերիտմիությունների նվաճումը, ամենից առաջ Գերմանիայի սոցիալիստական պրոլետարական յերիտմիության, վոր ստեղծվել եր հին սոցիալիստական յերիտասարդության ազատ միության 1919 թ. Վեյմար քաղաքում կայացած կոնգրեսում ծագած պառակտաման ժամանակ։ Նույնպիսի աշխատանք պետք է տարվեր նաև Չեխո-Մոլդավիայի յերկու սոցիալ-դեմոկրատական պատանեկան կազմակերպությունների—գերմանական և չեխական միությունների վերաբերմանը, վորոնք առաջացել եցին Ավստրիայի բանվորական յերիտմիության պառակտամից հետո։ Ֆրանսիայի սոցիալիստական յերիտմիությունը նույնպես վորոշ տատանվող դրության մեջ եր. անհրաժեշտ եր պայքար մղել, թեև կարձատե, Դանիայի և Ամե-

ըիկալի պատահնեկան կողմակերպությունների ու փորձիսասական զեկավալող տարրերի դեմ, վորոնք դանդաղեցում ելին հեղափոխական աշխատանքն այդ միությունների մեջ:

Այդ աշխատանքները շատ հարուստ ելին հետաքրքրական կենդանի և մարտական միջադեպերով:

Գործկոմը վոչ մի ջանք չեր ինայում կապվելու այդ կազմակերպությունների հեղափոխական տարրերի հետ։ Այդ միությունների մասսաների տրամադրությունը, — իսկ այստեղ խոսքը վերաբերում եր իսկապես մասսաներին, այսինքն տառնյակ հազարավոր յերիտասարդ բանվորներին, — վորոշակի հեղափոխական եր, սակայն մեծ ջանքեր ելին հարկավոր կովելու այդ միությունների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հետ կապված բյուրոկրատ զեկավարների դեմ և հակադրելու նրանց կամքին մասսաների հեղափոխական տրամադրությունը։ Գործկոմը բազմաթիվ կազմակերպություններից ստանում եր անազին բանակությամբ նամակներ, բանաձեռներ, հրավիրագրեր և այլն, ու չնայած իր սուլ միջոցներին, սահմանային ու գոստիկանական խոշընդուներին ու հետապնդումներին, նա առանց ուշադրության չեր թողնում այդ կազմակերպություններից վոչ մեկին։ Այն մարզերը, վորտեղից տեղեկություն-

ներ ելին ստացվում Բերլինի ծրագիրն ընդունելու մասին, անմիջապես ուղարկվում ելին Գործկոմի անդամներ, հատուկ պատգամավորներ արդեն կիՄ-իս միացած միություններից։ Գումարվում ելին փոքրամասնությունների կոնֆերենցիաներ, հրատարակվում ելին նրանց համար թերթեր, վարդում ելին բանակցություններ միությունների զեկավար որգանների և սոցիալ-դեմոկրատական բյուրոկրատաների հետ։ Պորլետարական յերիտասարդական շարժման ապաքաղաքականացման կողմը, թե նրա դեմ, ՅԻ հնտերնացիոնալի կողմը, թե նրա դեմ — ահա գլխավոր նշանաբանը պայքարի, վորին մասնակցում ելին հազարավոր բանվոր յերիտասարդներ, զանազան միությունների հազարավոր անդամներ։ Տարածանություններն այդ հարցերի շուրջը տեղի ունելին վոչ թե կազմակերպությունների վերին, այլ նրանց ստորին շերտերում։ ԿիՄ-ի Գործադիր կոմիտեն կարողացել եր մորիլլզացիաի յենթարկել ցենտրիտական միությունների հեղափոխական մասսաներին ու նրանց կոիվ տանել կազմակերպված ձեռվի։

Այսպիսի յեռանգույն աշխատանքների հետեւ վաճառքները շատ շուտով յերեացին։ Մեկը մըուսի յետեկից սկսեցին միանալ կիՄ-ին Զեխո-Սլովակիայի բանվորական յերիտամիությունը (գերմա-

նական կազմակերպությունը), Ֆրանսիայի սոցիալիստական յերիտամիությունը, Չեխիայի սոցիալ-դեմոկրատական յերիտամիությունը, Գերմանիայի սոցիալիստական պղողեարական յերիտասարդությունը, իսկ գրանցից առաջ արդեն միացել ելին Դանիայի սոցիալ-դեմոկրատական յերիտասարդությունը և Ամերիկայի սոցիալիստական պատանեկան միությունը:

Առանձնապես ուշադրության արժանի յէ այս պայքարի հետեւալ միջադեպը:

Յերբ ցենտրիստական յերիտամիությունների ղեկավարները նկատեցին, վոր կազմակերպությունները հետզհետե դուրս են գալիս իրենց ազգեցության տակից ու անցնում են ԿիՄ-ի շարքերը, վճռեցին կազմակերպչորեն միացնել իրանց ուժերը՝ հեղափոխական յերիտասարդության զորեղացման դեմ պայքարելու համար։

Այդ նպատակով վորոշվեց 1921 թվի փետրը-վարին գումարել ցենտրիստական միությունների կոնֆերենցիա։ Արդեն այն ժամանակ մատղություն կար, անշուշտ, ստեղծել յերիտասարդական մի ինքնուրուցն կազմակերպություն՝ ԿիՄ-ին հակադրելու նպատակով։ Սակայն այդ կոնֆերենցիայի կազմակերպողները շատ լավ հասկանում ելին, վոր այդ նշանաբանով իրանց չի հաջողվի վոչվոքի գրավել։ Նույնիսկ ԿիՄ-ի դեմ բացար-

ձակ կերպով պայքարող ցենտրիստական ղեկավարներն զգուշանում ելին բացեիրաց արտահայտել իրանց քաղաքական բացասական վերաբերմունքը դեսլի կոմմունիստները։ Պառակտում առաջ բերելու իրանց այդ մտադրությունը նրանք քողարկում ելին այս լոգունգով։ «ԿիՄ-ը պառակտեց յերիտասարդության հին միջազգացին միությունը, Յերիտասարդական ինտերնացիոնալը պետք է վերականգնվի իր հին, մինչպատերազման հիմունքներով»։ Այս ուղղությամբ առաջին քայն արեցին ցենտրիստական գործամանության ղեկավար Պիեր Լենեն, վորը հեռացել եր ֆրանսիական սոցիալիստական միությունից այս վերջինից ԿիՄ-ին միանալուց հետո, և Գերմանական Ավստրիայի սոցիալիստական բանվորական յերիտամիության կենտրոնական կոմիտեն։ Հրավիրագիրը կազմել եր Լենեն։ Հավատարիմ իր անպայման սխալ և վոչ լուրջ ծրագրին՝ այս խոնբակը «հրավիրում եր մասնակցելու կոնֆերենցիային բոլոր այն կազմակերպությունները, վորոնք 1914 թվին մտնում ելին սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների միջազգացին միության մեջ, նրանց թվում նաև արդեն ԿիՄ-ին միացած կազմակերպությունները»։

Սոցիալ-պատրիոտական պատանեկան կազ-

մակերպությունները, վորոնք 1920 թվի դեկտեմբերին կազմակերպել ելին իրանց սոցիալ-պատրիոտական Ինտերնացիոնալը, հրաժարվեցին կոնֆերենցիալին մասնակցելուց: Կոմմունիստական յերիտմիությունները հրավերն ընդունեցին, քանի վոր հույս ունեին այդ կոնֆերենցիալում դուցագրել կիՄ-ի մեջ մասնող կազմակերպությունների դորեկությունը հանդեպ ցենտրիստական միությունների խղճուկ մնացորդների:

Միանգամայն հավատացած իրանց հաջողությանը՝ նրանք ցանկանում ելին գործադրել բոլոն միջոցները, կիՄ-ի ըստ յերևութին նախապատրաստվող պառակաման առաջն առնելու համար: 1921 թվի փետրվարի 26-ին կոնֆերենցիալի բացմանը ներկա ելին 18 կազմակերպության ներկայացուցիչները, ներկա յեր նաև կիՄ-ի քարտուղար ընկ. Մյունցենբերգը: Կոնֆերենցիալի նախագահությունը, ինչպես և մանդատային հանձնաժողովը կազմված ելին մեծ մասամբ կոմմունիստական Յերիտմիության կենտրոնական կենտրոնացիոնալի վերականգնման» մասին զեկուցեց Ավատրիական սոցիալիստական յերիտմիության կենտրոնի կողմից Հեյնցը, գեկուցակից ունենալով ընկ. Մյունցենբերգին: Սկզբում կարծես ամեն ինչ լավ եր գնում, բայց յերբ մանգատային հանձնաժողովը առաջարկեց կոմմունի-

տական կազմակերպություններին հատկացնել 35 ձախ, իսկ ցենտրիստական կազմակերպություններին 14 ձախ միախ, կոնֆերենցիալի խաղաղությունը խանգարվեց: Այս առաջարկության հետևանքով ցենտրիստաների ներկայացուցիչները պահանջեցին ընդհատել նիստը և գնացին ֆրակցիոն խորհրդակցության: Շատ յերկար տևող խորհրդակցությունից հետո նրանք վերադասե և հայտարարեցին, վոր ընկ. Մյունցենբերգի համառության հետևանքով կոնֆերենցիայում մնալը համարում են ավելորդ ու այդ պատճառով հեռանում են: Խոսքին հետևեց գործը, և մնացած պատճամավորների արհամարհական աղաղակների տակ նրանք հեռացան դահլիճից: Այսպիսով կոնֆերենցիալից հեռացան պատճամավորների մի յերրորդից ել պակաս մասը, իսկ մնացողները շարունակեցին իրանց աշխատանքներն արդեն վորպես կոմմունիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալի ներկայացուցիչներ: Մինչ այդ գտնվել եր կոնֆերենցիալի կազմակերպողների կողմից կազմված յենթադրվելիք սոցիալիստական յերիտասարդական կազմակերպությունների միջազգային միության գաղտնի ծրագրի և կանոնադրության նախագիծը, վորով և պարզվել ելին նրանց իսկական գաղտնի նպատակները: այդ պատճառով կոնֆերենցիան հա-

տուկ բանաձևով մերկազրեց յենարիստների գաղտնի գործունելությունը, Եզդ բանաձևում ասված էր, «Միակ ինտերնացիոնալը, վորի շարքերում հեղափոխական յերիտասարդ բանվորները հնարավորություն կունենան մասնակցելու շահագործվող բանվորների մղած պայքարին, դա կոմմունիստական Ինտերնացիոնալն է»: Ֆրանսիայի սոցիալ-դեմոկրատական յերիտամիության կողմից Վիեննայում հրավիրված միջազգային կոնֆերենցիան պարտավորեցնում է բոլոր պրոլետարական պատանեկան կազմակերպություններին ամենասերտ մարտական կապ ունենալ կոմինտերնի հետ, մտնել նրա շարքերը և յերիտասարդ բանվորների ազատազրական պայքարն առաջտանել նրա հետ սերտորեն համագործակցելով: Կոնֆերենցիան ամենախիստ կերպով դատապարտում և յենարիստական կուսակցությունների պառակտողական գործելակերպը (տակարկան), վորով նրանք աշխատում են դժվարացնել ու դանդաղեցնել հեղափոխական պրոլետարիատի միասնականությունը կոմինտերնի շարքերում, նոր, այսպես կոչված  $2^{1/2}$  Ինտերնացիոնալի կազմակերպությամբ:

«Կոնֆերենցիան համարում է...սոցիալիստական պատանեկան կազմակերպությունների միակ միությունը կոմմունիտական Յերիտասարդական

ինտերնացիոնալը և զատապարտում է յերիտասարդական նոր Ինտերնացիոնալ կազմակերպելու ամեն մի փորձ, փորպես միանգամայն վեասակար և յերիտասարդ պլողետարների միացյալ հեղափոխական ֆրոնտի մանցավոր պառակտում...»:

Կոնֆերենցիան շկարողացավ, այնուամենայնիվ, խանգարել  $2^{1/2}$  Ինտերնացիոնալի կազմակերպումը: Բայց և այնպես նա ունեցավ անմիջական հաջողություններ. վերջիվերջո Զեխական յերիտամիությունը վերջնականապես անցավ ԿիՄ-ի շարքերը, և ոպպացիցիոն շարժում սկսվեց Ավտրիայի սոցիալ-դեմոկրատական յերիտամիության մեջ, վորը հետազայում անցավ նույնպես Կոմմունոլի շարքերը:

Եզս կոնֆերենցիայով վերջացան տարածայնությունները յենարիստական յերիտասարդական կազմակերպությունների շարքերում: Նրանց բոլոր լավագույն հեղափոխական տարրերն անցան ԿիՄ-ի շարքերը:

Մեկ և կես տարվա ընթացքում, յերբ ԿիՄ-ի Գործադիր կոմիտեն տանում եր այսքան մեծ աշխատանքներ, բանվորական շարժման մեջ տեղի ելին ունեցել բավական կարևոր դեպքեր:

Հեղափոխական հզոր ալիքը, վոր պատերազմից հետո տարածվել եր ամբողջ Յերիտասարդ մեկ, արդեն սկսել եր աստիճանաբար մեղմանալ:

Պրոլետարիատին վոչ մի տեղ, բացի Ռուսաստանից, չհաջողվեց վերջնականապես ջախջախել բուրժուազիային կամ գոնե պահպանել իր գրաված հեղափոխական դիրքերը:

Տարերային-մասսայական շարժումների գլուխ կանգնած հեղափոխական զանազան խմբակներն ու հոսանքները, վոր փորձում ելին պայքար կազմակերպել իշխանության գրավման կամ գոնե պրոլետարիատի ձեռք բերած նվաճումները նրա ձեռքում պահելու և ամրացնելու նպատակով,— չափազանց թույլ դուրս յեկան։ Մասսաները պարագեցին բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատիայի միջև կայացած դաշինքի շնորհիվ։

Այդ շրջանի կոփմներով ու պարտություններով բացվեց բուրժուազիայի խստագույն հականարձակումների եպոխան (դարաշրջանը)։ Մական միաժամանակ նրանք ունելին նաև շատ կարեոր ու դրական հետեւանքներ։ Պարտություն կրած պրոլետարիատի ավանդարդի շարքերում գարգանում և ամրանում եր այն գիտակցությունը, վոր բուրժուազիային չի կարելի տապալել գրոհով, վոր տարերային-մասսայական շարժումները բավական չեն հեղափոխության հաղթանակի համար, այլ պրոլետարիատին անհրաժեշտ ե վոչ միայն միասնական մարտական դեկավար կենտրոն, այլև ուժեղ քաղաքական կազմակերպություն—ուժեղ հեղափոխական կուսակցություն։

Յեվ իրապես, այդ շրջանում կոմինատերնի մեջ մտնող դեռ չհամախմբված ու քանակով ել փոքր և թույլ խմբակներն սկսեցին գառնալ կոմմունիստական կուսակցություններ, վորոնք ձըդտում ելին փոխվել մասսայական կազմակերպությունների։ Իսկ գոյություն ունեցող, բայց թեորիական բավականաչափ պարզություն չունեցող կուսակցություններն սկսեցին ձշտել իրանց վերաբերմունքը դեպի այդ հարցերը, վորի հետեւանքով նրանց շարքերից հեռացան զուտ ոպղորտյունիստական տարրերը։

Քաղաքականապես կարեռը յերկրներում հեղափոխական քաղաքական կովի դեկավարությունն անցավ կոմմունիստական կուսակցությունների ձեռքը։

Այս հանգամանքը վորոշ փոփոխություններ մտցրեց կոմիներիտական կազմակերպությունների շարժման ընդհանուր պայմանների մեջ։ Այն մտայնությունը, թե կոմիներիտական կազմակերպությունները հանդիսանում են հեղափոխական պայքարի դեկավարներ, վորպես բանվորական շարժման ավանդարդ, կորցրեց այլև իր նշանակությունը։ Այժմ պետք ե վերանար այն անվստահությունը դեպի հեղափոխական կուսակցությունները, վորը գոյություն ուներ կոմիներիտության գործունեյության առաջին շրջա-

նում և վորը զգացվում եր դեռ Բերլինի կոն-  
գրեսաի վորոշումների մեջ:

Անպայման Կոմիստերնի սեկցիաները դեռ  
հեռու ելին կատարելությունից, նրանք դեռևս  
հեռու ելին խակական կոմմունիստական կուսա-  
կցություններ լինելուց, բայց և այնպես նրանք  
Կոմմունիստական Ինտերնացիոնալի սեկցիաներն  
ելին, վորոնց գործունեցությունը ղեկավարում  
եր Կոմինտերնի Գործադիր Կոմիտեն, և միայն  
նրանք կարող ելին լինել կոմմունիզմի համար  
պայքարող ամեն մի յերկրի պրոլետարիատի ճա-  
նաչված ղեկավարները:

Բանվորական հեղափոխական շարժման ներ-  
սում կատարվել եր քաղաքական ծանրության  
կենտրոնի տեղափոխություն, ու այդ հանգանա-  
քը չեր կարող չազդել նաև կոմմունիստական  
յերիտամիությունների վրա, մանավանդ վոր կոմ-  
յերիտական շարժման շարքերում ևս առաջացել  
ելին յերեսություններ, վորոնք պահանջում ելին  
վորոշ փոփոխություններ մտցնել ընդունված  
գծի մեջ:

ԿիՄ.ի շարքերում գանվող միությունների  
զարգացումը պայմանավորված եր յերեք մո-  
մենտով:

1. Ռեֆորմիստական բյուրոկրատիների և պա-  
տերազմի ու ռեֆորմիզմի գեմ մղած պայքարում

գաստիարակված ու կախված միությունների դե-  
կավար կազմերի հին սերունդը՝ պատամնեկան  
կազմակերպությունների ակադի աշխատավորնե-  
րի մեծամասնությունն արդես անցել եր այդ  
միջոցին կազմակերպված կոմկուսակցություննե-  
րի շարքերը:

2. Միությունները քանակավես աճում ելին  
իհաշիվ յերիտասարդության այնպիսի շերտերի,  
վորոնք թեե շարժման մեջ ելին դրվել պատե-  
րազմի ու նրան հետեւող կրիզիսների շնորհիվ,  
բայց անպայման չելին անցել այնպիսի դպրոց,  
վորպիսին անցել ելին միության հին անդամներն  
անլեզալ աշխատանքի շրջանում:

3. Բանվոր յերիտասարդության մասսաները  
հետպատերազման շրջանում տառապում ելին  
այլ կարիքների ծանրությունից, քան պատերազ-  
մի ժամանակ: Նրանք ճնշվում ելին ղեծորիլիզա-  
ցիալի և հասակավոր բանվորների ֆրոնտներից  
վերադառնալու հետեւանքով ստեղծված գործա-  
զրկությունից, նրանց ճնշում եր հետզհետե աճող  
թանգությունը, ուժեղացող շահագործումը մանր  
արդյունաբերության մեջ, ուր այժմ ստիպված  
ելին աշխատանք վնասել յերիտասարդ բանվոր-  
ները, ու մի շարք նման կարիքներ՝ գլխավորա-  
պես անտեսական բնույթ կրող:

Այս բոլորն, իհարկե, պետք ե այս կամ այն

չափով անզրագառնար պատահնեկան կազմակեր-  
պությունների վրա: Հին դեկավար կազմերն ան-  
ցել ելին կոմկուսների շաբթերն, ու այդ պատճա-  
ռով պատահնեկան կազմակերպությունների քա-  
ղաքական մակարդակը նշանափոր չափով ցածր-  
ցել եր: Այդ կազմակերպությունների «քաղա-  
քական դեկավարող դերը» մասամբ գարձել եր  
մեքենալորեն կրկնվող անբովանդակ մի ֆրազա:

Միությունների քանակական աճումն իհաշվի  
նոր, քաղաքականապես ավելի նվազ զարգացած  
անդամների նույնապես ազդում եր նրանց վրա  
նույն ուղղությամբ:

Միությունների մեջ մանող յերիտասարդու-  
թյան այս նոր խավերն իրանց հետ բերում ելին  
վոչ միայն քաղաքական ուրիշ մակարդակ, այլ և  
ուրիշ շահեր: Նրանք, ինչպես վերեսում հիշեց,  
իրանց կաշու վրա զգում ելին կապիտալիզմի  
ճնշումը: Գործազրկությունից և մանր արդյու-  
նաբերության մեջ տիրող ուժգին շահագործումից  
տանջվելով, նրանք իրանց կազմակերպություն-  
ների որակարգում առաջարդում ելին տնտեսա-  
կան պայքարի հարցեր: Դեռ 1920 թվի ամառը  
շատ կազմակերպություններում սկսվում են մի  
շարք գիսկուսիաներ այդ հարցերի շուրջը:

Ֆրանսիայում և Բելգիայում, վորտեղ հա-  
մաշխարհային պատերազմից հաղթող գուրու յեկած

րուրժուազիան իր բանակը կրծատեց շատ ան-  
նշան չափով և շարունակում եր նոր ու նոր  
հարյուր հազարավոր յերիտասարդ բանվորների և  
զյուղացիների պարբերական մոբիլիզացիան, մեր  
կազմակերպությունների առաջ կանգնեց հակա-  
միլիտարիստական պայքարի հարցը: Այժմ արդեն  
հարկ չկար բարձրացնել պատերազմի գեմ պար-  
բար մղելու հարցը, ինչպես այդ եր Բելնի կոն-  
ֆերենցիալից հետո, այլ անհրաժեշտ եր այժմ  
գնել կազմականներում և զինվորական լագերնե-  
րում կոմսոմոլի կողմից տարվելիք ավիտացիալի և  
պրոպագանդալի հարցերը:

Բացի այդ միությունների մեջ մտած նոր յերի-  
տասարդության թեորիական անբավարար պատ-  
րաստականությունը պահանջում եր բացառիկ  
ուշադրություն գետի նրանց սիստեմատիկ քա-  
ղաքական դաստիարակության հարցը:

ԿիՄ-ի յերկրորդ կոսզրեսում հին Գործադիր  
կոմիտեն հանդիմանության արժանացավ, վոր  
բավական ուշադրության չեր արժանացըել այս  
հարցերը, վորոնք ծագել ելին դեռ 1920 թվին  
ու գնալով հետզհետե ուժեղացել: Այդ հանդի-  
մանությունը կատարելապես արդարացի յեր:  
Յերիտասարդական ինտերնացիոնալի դեկավար-  
ներն իրանց վկավոր ուշադրությունը կենտրո-  
նացըել ելին զուտ քաղաքական խնդիրների վրա:

Տարված յինելով պատահեկան կազմակերպությունների քաղաքական գեկավարի մտահնությամբ՝ նրանք անտեսել ելին իր ժամանակին ծագած զուտ պատահեկան խնդիրները:

Վոր պատահեկան կազմակերպությունների գերը և նրանց վերաբերմունքը դեպի բանվորական շարժումն առաջարարակ սկսել եր փոխվեր, այդ արտահայտվեց նաև յերկու այլ միմյանց հետ սերտ կապ ունեցող դիսկուսիաներով, վորոնք տեղի ունեցան միջազգային մասշտաբով նույն 1920 թվին։ Այդ դիսկուսիաներից մեկը կոմիտեմիտիությունների, վորպես մասսայական կազմակերպությունների բնույթի մասին եր, իսկ մյուսը կոմիտեմիտիությունների և կոմկուսակցությունների փոխհարաբերությունների մասին։

Այս յերկու դիսկուսիաների արմատներն անպայման թագնված ելին կոմիտեմիտիությունների կազմի վերը մատսնանշած փոփոխության, ինչպես և կոմինտերնի սեկցիաների գերի փոփոխման մեջ։ Այս դիսկուսիաները լուծում ստացան կոմինտերնի կոնգրեսի կողմից։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ  
(ԿԻՄ-Ը)

Կոմինտերնի կոնգրեսսն առաջադրեց իր սեկցիաներին իրանց կազմակերպությունները դարձնել պրոլետարական մասսայական կազմակերպություններ։ 21 պարմանի ընդունելությամբ նա ստեղծեց նախապայմաններ կոմինտերնի սեկցիաները դարձնելու միասնական կենտրոնացած կուսակցություններ, դեպի վորոնց յերիտմիտիությունները կարող կլինելին վատահություն ունենալ և իրանց քաղաքական ղեկավարությունը նրանց հանձնել։ Միաժամանակ կայացավ կոմկուսակցությունների պատգամավորների հետ Մոսկվայեկած յերիտմիտիությունների ներկայացուցիչների խորհրդակցություն։ Այդ խորհրդակցության միջոցով արևմտայեվրոպական յերիտմիտիությունների ներկայացուցիչները բավական մոտեցան ուսուական կոմիտեմիտիության հետ։ Այդ մոտեցումը վճռական նշանակություն ունեցավ վերհում

հիշված յերկու դիսկուսիաների առաջացրած հարցերի վերջնական լուծման համար։ Պարզվեց, վոր միջազգային յերիտարժաման վերաբերող մի շարք կարեոր հարցերի շուրջը մի կողմից ոռւս ընկերների և մուս կողմից ԿԻՄ-ի Գործադիր կոմիտեի անդամների ու արևմտա-յեվրոպական միությունների ներկայացուցիչների միջև դոցություն ունեին բավական խոշոր տարածանություններ։

Ծուսական կոմսոմոլի շարքերում 1919 և 1920 թվերին տեղի ունեցած դիսկուսիան սկզբունքորեն վճռել եր յերիտմիության, վորպես բանվորական յերիտասարդության մասսական կազմակերպության պրոբլեմը։ Նա 1919 թվի հունիսին մերժել եր միքանի ընկերների կողմից պաշտպանվող այն միաքը, թե յերիտմիությունը պետք է լինի ընտրյալ քաղաքականապես հասուն տարրերի մի նեղ կազմակերպություն, իսկ սրա և մասսաների միջև պետք է լինի մի հատուկ պրոֆմիության բնույթ կրող անցողակի կազմակերպություն։

Արևմտա-յեվրոպական միությունները նմանորինակ դիսկուսիա չելին ունեցել ուստի յեվրոպական լինկերների մեծամասնությունը, հետեւ վելով պատմականորեն պալմանափորված այն սկզբունքին, թե յերիտկազմակերպությունները

քաղաքական դեկամալող դեր ովհալի ունենան, կանգնած եր բավական հաստատ կերպով սուսական կոմսոմոլի կողմից մերժված տեսակեաի վրա։

Ծուսական կոմիտեիտմիությունն արդ տարիներում կանոնավորել եր նույնպես իր փոխհարաբերությունը կոմկուսակցության հետ։ Այդ փոխհարաբերությունը վորոշվում եր հետեւյալ փորմուլայով՝ յենթարկվել քաղաքական հարցերում և պահպանել կազմակերպչական ինքնուրունություն, ըստվորում նախապես պարզ կերպով վորոշված եր, վոր կազմակերպչական ինքնուրունությունն ու քաղաքական յենթարկումը պետք եր համկանալ ամենալայն մտքով։ Այնինչ գործնականում շատ հաճախ պատահում եր, վոր կոմսոմոլն ինքնուրուն կերպով արտահայտվում եր քաղաքական հարցերի առիթով կամ կուսակցությունը միջամտում եր միությունների կազմակերպչական հարցերին, յեթե նրանք քաղաքական ընույթ ելին կրում։ Ծուսական կոմսոմոլի համար առանձնապես դյուրին եր կանոնավորել իր հարաբերությունները կոմկուսակցության հետ, քանի վոր նա գործ ուներ կատարելապես հասունացած կուսակցության—բայց վիկների կուսակցության հետ։

Տնտեսական պակարի, հակամիլիտարի-

տական և զաստիտրակչական հարցերի, ինչպես  
և մասսավական կազմակերպությունների ու կոմ-  
սոմոլի և կոմկուսակցությունների փոխա-  
րաբերությունների շուրջը ծագած դիսկուսիա-  
ների մոմենտից սկսեց ուժեղանալ ոռւսական  
կոմիտեի առաջնային ազգեցությունը ԿիՄ-ի վրա:  
Վերջիվերջո Կոմիտեի տմիության Խնտերնացիոնալի  
յերկրորդ կոնգրեսում ԿիՄ-ի ղեկավարությունն  
անցավ ոռւսական կոմսոմոլի ձեռքը: Մինչև այժմս  
ել դեռ քչերին ե հայտնի, վոր տարածայնու-  
թյունները այդ հարցերի շուրջը յերբեմն ընդու-  
նում ելին բավական սուր բնույթ: Ուուս ընկեր-  
ների համար պարզ եր, վոր բոլոր այդ դիսկուս-  
ուիաներում ճշգրիտ սկզբունքներ կարող են  
ընդունվել միմիան այն ժամանակ, յերբ Ռու-  
սաստանի Կոմիտեի տմիությունը, Ռուսաստանի  
Կոմկուսակցության ոգնությամբ, ղեկավարող ադ-  
դեցություն ձեռք կը երի ԿիՄ-ի շարքերում:  
Անհրաժեշտ եր կոտրել միջազգային յերիտարժ-  
ման վորոշ տարրերի պատմականորեն այս  
չարդարացող համառությունը և նրանց հակադրել  
նոր պայմանների վրա հիմնվող բայց կիրան  
սակետները:

Ռուսական կոմսոմոլի ազգեցության ուժե-  
ղանալուն խոշոր արգելք եր, հանդիսանում այն  
հանգամանքը, վոր ԿիՄ-ի Գործկոմը գտնվում եր

արտասահմանում, և նրա հետ կապ պահպանելը  
այն ժամանակների պայմաններում չափազանց  
դժվար էր: ԿիՄ-ի Գործկոմի և կոմիտեների  
Գործկոմի զանազան վայրերում գտնվելը նույն-  
պես մեծ չափով խանգարում էր այդ յերկու  
կազմակերպությունների միջև նորմալ փոխա-  
րաբերություններ ստեղծելուն: Այդ բաժանման  
վրա պնդում ելին հենց այն ընկերները, վորոնք  
Բերլինի կոնգրեսում այն կարծիքն ելին պաշտ-  
պանում, թե ԿիՄ-ը պետք է լինի վոչ թե Կոմ-  
իտերների սեկցիա, այլ նրան հավասար յեղբաշ-  
րակից կազմակերպություն: Այս հանգամանքների  
շնորհիվ սկսված դիսկուսիան, վոր նպատակ  
ուներ փոփոխության յենթարկելու պատճեկան  
կազմակերպությունների ֆունկցիաներն ընդհա-  
նուր բանվորական շարժման մեջ, ավելի սուր  
կերպարանք ընդունեց այն ժամանակ, յերբ հարց  
բարձրացավ այն մասին, թե վորաեղ պետք ե  
մշտապես գտնվի ԿիՄ-ի Գործկոմը, և վորաեղ  
պետք ե գումարվի նրա յերկրորդ կոնգրեսում:

1921 թվի գարնանը տարածայնությունները  
Յերիտասարդական Խնտերնացիոնալի Գործկոմի և  
ՌԿՅԵՄ միջև հասան իրանց գագաթնակետին:  
Այն ժամանակ ԿիՄ-ի սեկցիաների մեծամաս-  
նության կարծիքով կոնգրեսը պետք ե գումար-  
վեր արևմտա-յեվրոպական յերկրներից մեկում.

այս կարծիքն սկզբում հաղթանակեց: 1921  
թվի առլրիխն կոնդրեսում գումարվեց գեր-  
մանիայի Յենա քաղաքում: Սակայն կոմին-  
տերնի Գործկոմը պարզ գիտակցելով կիՄ.-ի  
ՌԿՅԵՄ միջև ստեղծված տարածանություն-  
ների քաղաքական նշանակությունը՝ միջամտեց  
այդ հարցին: Կոնդրեսոի աշխատանքներն ընդ-  
հատվեցին, և կիՄ.-ի յերկրորդ հերթական կոն-  
դրեսու գումարվեց Մոսկվայում կոմինտերնի  
կոնդրեսոի հետ միաժամանակ: Այս  
յերկրորդ կարևոր նշանակություն ունեցավ յե-  
րիտասարդական ամբողջ շարժման համար: Բոլոր  
տարածանությունները պատանեկան կազմակեր-  
պությունների քաղաքական գերի ու նրանց և  
կոմինտեսակցությունների փոխհարաբերություն-  
ների մասին լուծում ստացան կոնդրեսոի կողմից:  
Բայց կիկիկան ոկզբունքները հաղթանակեցին: Սկը-  
պեց կիՄ.-ի զարգացման մի նոր շրջան, վորը  
մինչև այժմ ել դեռ շարունակվում ե—կոմիերիտ-  
շարժման զարգացման մի շրջան, վորն իրեն  
հատուկ, կիՄ.-ի խնդիրներին հարմարեցրած  
մեթոդներով իրազործում ե յերիտասարդ բանվոր  
և գյուղացի մասսաների կազմակերպումը՝ պայ-  
քարելու հանուն կոմմունիզմի:

Այսպիսով կոմիերիտամիության զարգացման  
առաջին շրջանը բնորոշվում ե յեվրոպական խոշոր

յերիտամիությունների կողմից ուժորմիզմի դեմ և  
հանուն հեղափոխական տակտիկայի մղած պատմա-  
կան խոշոր պայքարով: Նրա զարգացման յերկրորդ  
շրջանը կազմում է Բերլինի կոնդրեսուին հետևող  
ժամանակամիջոցը, յերբ կիՄ.-ը դարձավ համաշ-  
խարհազմ քաղաքական կազմակերպություն: Այդ  
յերկու շրջաններն այս վերջացել են: կիՄ.-ի  
զարգացման այդ յերկու շրջանների պատմու-  
թյունը պարզ ե ու հասարակ, այդ պատճառով  
ել հեշտ ե յենթարկվում ուսումնականիության:

Նրա զարգացման յերկրորդ շրջանը, վորի  
մեջ գանվում ենք այժմ, բնորոշվում ե նրանով,  
վոր կատարվում է կոմիերիտամիությունների տակ-  
տիկայի և կազմակերպչական ձևերի վերջնական  
ձևավորումը իշխանության համար մղվող պայքա-  
րի պայմաններում: Այս շրջանն ավելի բարդ ե,  
այդ պատճառով մենք ստիպված ենք բավակա-  
նանալ միայն անցքերի ժամանակադրական նկա-  
րագիրը տալով:

Նախ կանգ առնենք յերկրորդ կոնդրեսուի  
աշխատանքների վրա:

Կազմակերպչական տեսակետից յերկրորդ  
կոնդրեսու յերկան հանեց կիՄ.-ի խոշոր հաջո-  
ղությունները համաշխարհական կազմակերպու-  
թյուն գառնալու ձանապահնեն: Առաջին և յեր-  
կրորդ կոնդրեսուների միջանկալ շրջանը կազմա-

կերպչական բուռն զարգացման շրջան եր թե  
ԿիՄ-ի համար իր ամբողջությամբ, թե նրա մեջ  
մտնող միությունների համար: Այն միջոցին, յերբ  
առաջին կոնգրեսսին ներկա ելին 14 կազմա-  
կերպության 19 ներկայացուցիչ, յերկրորդ կոն-  
գրեսսին մասնակցում ելին 42 ինքնուրույն  
կազմակերպության 135 պատգամավոր: Բերլինի  
կոնգրեսսին մասնակցող կազմակերպությունների  
անդամների ընդհանուր թիվը հասնում եր  
200.000.ի, այնինչ յերրորդ կոնգրեսսինը  
600—700 հազարի: Բազի այլ, շարժումը, վորը  
1919 թվին ընդգրկում եր միայն յերրողական  
յերկրները, այժմ տարածվել եր յերկրագնդի  
բոլոր մասերը: Յերբ Հյուսիսային և Հարավային  
Ամերիկայում, Հարավային Աֆրիկայում, Ավստրա-  
լիայում և Հեռավոր Արևելքում դեռևս չկային  
Գերմանիաի, Չեխո-Սլովակիայի ու Ֆրանսիայի  
միություններին հավասար բազմահզամ կազմա-  
կերպություններ, բայց և այնպես այնտեղ յերիտ-  
միությունների հիմքը դրված եր, վորոնք ներ-  
կայումս իրանց շարքերում հաշվում են հազա-  
րավոր անդամներ: Յեզ վերջապես այն միջո-  
ցին, յերբ Բերլինի կոնգրեսսում ԿիՄ-ը ներկա-  
յացնում եր առանձին կազմակերպությունների  
դեռևս թույլ կերպով շաղկապված մի միու-  
թյուն, յերկրորդ կոնգրեսսի շրջանում նրա

բոլոր սեկցիաներն իրանց ղեկավար ելին ճա-  
նաչում Գործադիր Կոմիտելին և անսպայման  
յենթարկվում ելին նրա դիրեկտիվներին:

ԿիՄ-ի յերկրորդ կոնգրեսսի բոլոր պատգա-  
մավորները մասնակցում ելին նաև Կոմինտերնի  
յերրորդ կոնգրեսսի աշխատանքներին: Նրանք  
ազգվում ելին նրա աշխատանքներից, վոր ան-  
ցնում ելին «գեղի մասսաները» նշանաբանի տակ,  
նրանք այնտեղ տեսնում ելին, վոր կոմմունիս-  
տական կուսակցությունները ձգտում են դառնալ  
մասսայական կազմակերպություններ: Այդ կոն-  
գրեսսում նրանք կարող ելին նկատել, վոր Կոմ-  
ինտերնի սեկցիաները թեև դեռևս վերջնակա-  
նապես ամրացած և քաղաքականապես հաստա-  
տուն կոմկուսակցություններ չելին, բայց և այն-  
պես նրանք վորոշակի հեղափոխական կազմա-  
կերպություններ ելին, վորոնց կարելի յեր վըս-  
տահել առանց վորևե յերկուպես:

Յեզ վերջապես նրանք կարող ելին համոզ-  
վել, վոր Կոմինտերնի ղեկավարությունը հաս-  
տատուն կերպով կենարունացած ե բայց կիլիկան  
կորիզի ձեռքում, վորը համախմբված եր ընկեր  
Լենինի շուրջը: Այս բոլորը միասին ԿիՄ-ի աշ-  
խատանքների համար ստեղծում ելին բոլորովին  
այ հիմունքներ, քան այդ գոյություն ուներ Յե-  
նալի կոնգրեսսի գումարման ժամանակ: Յերկրորդ

կոնգրեսսի պատգամավորների մեծամասնությունը  
մասնակից եր նաև Յենալի «Քաղաքական ինք-  
նուրույնության» կոնգրեսսին, այդ պատճառով  
նրանք չելին կարող այժմ չհասկանալ, թե վոր-  
քան անհմաստ բան ե ԿԻՄ-ը նկատել վորպես  
քաղաքական ինքնուրույն միավոր՝ չկապված  
Կոմինտերնի հետ կամ նույնիսկ նրա հետ վորոշ  
հակառակության մեջ դատնվելով։

Այս բոլոր հանգամանքները նպաստեցին այն  
բանին, վոր պատահնեկան շարժման դերի, նրա  
փոխարարերությունների և միջազգային յերիտ-  
շարժման տակտիկական հարցերի շուրջը ծաղած  
դիսկուսիան վերջացավ ավելի արագ, քան այդ  
կարելի յեր սպասել։ Կոնգրեսսի արձանագրու-  
թյուններից նկատվում ե, վոր նրա աշխատանք-  
ների ծանրության կենտրոնը կազմում ելին զուտ  
յերիտասարդական հարցերը։ Պատգամավորների  
մեծամասնությունն ընդհանուր հարցերի առի-  
թով շատ շուտով միացավ ուստական պատգա-  
մավորների տեսակետին և միայն տնտեսական  
ոլորչարի և այդ ասպարիզում ունենալիք տակ-  
տիկական հարցերի վերաբերմանը տարածալու-  
թյունները փոքր ինչ յերկարեցին։

Թեև մյուս բոլոր հարցերը վճռվեցին, բայց  
յերիտկազմակերպությունների դուռ պատահե-  
կան հարցերի վերաբերմանը ունենալիք տակտի-

կալի հարցը գեռ վճռված չեր։ Պետք ե արդյոք  
յերիտմիությունը, նրանից հետո, յերբ նա ըն-  
դունեց կուսակցությանը քաղաքականապես յեն-  
թարկելու անհրաժեշտությունը, ձգտեր դառնա-  
լու մասսայական կազմակերպություն, իր մեջ  
ընդունելով յերիտասարդ բանվորների լայն մաս-  
սաներին՝ նրանց իր աշխատանքի պրոցեսում  
կոմմունիստուրեն դաստիարակելու նպատակով,  
թե նա պետք ե լիներ յերիտասարդ գիտակից  
կոմմունիստների մի նեղ կազմակերպություն,  
վորը պլանաշափ աշխատանք ե տանելու յերի-  
տասարդ բանվորներին հեղափոխականորեն դաս-  
տիարակելու նպատակով վոչ թե իր կազմակեր-  
պության ներսում, այլ յերիտմիության շուրջը  
խմբած հատուկ կազմակերպություններ ստեղ-  
ծելով։ Այսպես եր դրված հարցը յերկրորդ կոն-  
գրեսսում։ Ռուսական ընկերները, նրանց հետ և  
մնացած պատգամավորների մեծամասնությունն  
այն կարծիքի ելին, վոր պատահնեկան կազմա-  
կերպություններն իրանք պետք ե լինեն մաս-  
սայական՝ կազմակերպություններ—կոմմունիզմի  
դալրոցներ։ Յերիտմիություններն իրանց դռները  
պետք ե լայն բացեն քաղաքի և գյուղի աշխա-  
տավորական յերիտասարդության առաջ։ Նրանք  
պետք ե իրանց շարքերն ընդունեն բոլոր այն  
յերիտասարդ բանվորներին և գյուղացիներին,

վորոնք թեկուզ ամենաընդհանուր ձևով լեկել են համոզման, վոր իրանց շահերի պաշտպանությունը պետք է կատարեն իրանց պլոյետարական կազմակերպությունների շարքերում։ Գիտակից կոմմունիստների դաստիարակությունը պետք կից կոմմունիստների միությունների ներսում և նրանց է կատարվի միությունների ներսում և նրանց գործունելության ամբողջ պրոցեսում։ Վորպես կոմմունիստական դաստիարակության լավագույն միջոցներ կոնգրեսով մատնանշեց տնտեսական կոփի մղելու, հակամիլիտարիստական պլոպագանդայի և հատուկ կոմմունիստական դաստիարական աշխատանքի վրա հենց յերիտասարդական միության ներսում։

Հակառակ տեսակետ ելին պաշտպանում գլխավորապես ավատրիական ընկերները, վորոնք պնդում ելին, թե անտեսական կովի համար պետք է ստեղծվեն հատուկ, ինչպես իրանք ելին ասում «միջանկալ» կազմակերպություններ յերիտամիությունից դուրս, ըստ վորում այս վերջին պետք է ապահովեր իր համար նրանում մինը պետք է ապահովեր իր համար նրանում միան դեկավարող դերը։ Այս դիսկուսիան ևս վերջացավ ուստական ընկերների պաշտպանած տեսակետի հաղթանակով։

Յեթե ցանկանանք մի հայտարարի բերել կոնգրեսսի աշխատանքները, կդանք հետեւ յերակացության,

1. ԿիՄ-ը յերկրորդ կոնգրեսում հրաժարվեց քաղաքական ինքնուրության սկզբունքներից և ընդունեց, վոր քաղաքական դեկավարող դերը կամ, այլ խոսքով՝ յերիտամիությունների, վորպես «բանվոր դասակարգի ավանդարդի» դերը քաղաքական իմաստով միայն ժամանակավոր անցողակի յերևույթ եր։

2. Ընդունեց և կոնկրետացրեց կոմինտերնի յերրորդ կոնգրեսսի առաջարած «դեպի մասսաները» հիմնական սկզբունքը յերիտաշարժման վերաբերմամբ։

3. Մշակեց յերիտամիությունների համար հատուկ գործունելության հիմնական դիրեկտիվներ (հրահանգներ) յերիտասարդ բանվոր և գյուղացի մասսաներին իրանց շարքերը գրավելու համար։ Այս հարցում իբրև դեկավար սկզբունք ընդունվեց, վոր կոմիերիտամիությունը պետք է նպատակ նի իր կազմակերպությունը դարձնել պլոյետարական յերիտասարդության բոլոր պահանջներին համապատասխան գործունելություն ունեցող միակ հեղափոխական կազմակերպություն։

Խոշոր նշանակություն ունելին նաև կոնգրեսսի վորոշումները կազմակերպչական հարցերի մասին։ Բերլինի կոնգրեսում ընտրված հինգ անդամից բաղկացած Գործադիր կոմիտես չափազանց փոքրաթիվ եր այսպիսի մի խոշոր,

բազմապիսի նոր խնդիրներ իրագործող կազմակերպություն ղեկավարելու համար։ Նոր Գործադիր կոմիտեն ընտրվեց 11 անդամից և 4 թեկնածուից։ Գործկոմի մշտական տեղը վորոշվեց ըստրել Մոսկվան, վորտեղ գտնվում եր Կոմինտերնի Գործկոմը։ Իսկ Մոսկվայի և յեվրոպական յերկրների միջև կապի դժվարության մասին յեղած առարկությունները հերքելու նպատակով վորոշվեց Բերլինում ունենալ հատուկ բյուրո։ Գործկոմի յերեք անդամներից։ Այս վորոշումով հիմք դրվեց ԿիԵՎ-ի և Կոմինտերնի սերտ համագործակցության և Կոմմունիստական Յերիտասարդական Խնտերնացիոնալի մեջ ՌԿՅԿՄ մշտական ազգեցության պահպանման։

---

## ՆՈՐ ՌԻԴԻՌՎ

Այս հարցերը կոնգրեսում համեմատաբար հեշտ վճռվեցին, քանի վոր առանձին միությունների ներկայացուցիչները գտնվում եին մեկ կողմից Կոմինտերնի յերրորդ կոնգրեսի աշխատանքների և մյուս կողմից Մուսատանում տեսածի և հատկապես Կոմիերիտամիության գործունեյության ազգեցությունների տակ։ Սակայն կոնգրեսսի վորոշումները միությունների մեջ կիրառելը բավական դժվար և տևական գործ եր, քանի վոր այդ վորոշումները հիմքից փոխում եին նրանց նախկին բոլոր սկզբունքները։

Կոմմունիստական Յերիտասարդական Խնտերնացիոնալի և նրա սեկցիաների զարգացումը նոր հիմունքներով դժվարանում ել նաև ընդհանուր քաղաքական գրության մեջ տեղի ունեցած մեծ փոփոխություններով։ 1921 թիվն սկիզբն եր պրոլետարիատի նահանջի և կապիտալի հարձակման։ Գործադրկության նոր ալիքն ընդգրկել եր աշխատավոր յերիտասարդությունը։ Պրոլետա-

ըիստի լոռշոր յելութները վերջացել ելին պարտությամբ, իսկ յերիտասարդության մասնակի կոխվերն առանձին յերկրներում՝ ուղղված յերիտասարդության անտեսական և իրավական դրության վատթարացման դեմ, նույնպես մնում ելին անհետեանք: Յերիտասարդական մասսաների մեջ առաջացել ելին քաղաքական անտարբերության և պասսիվության տեսնդենցներ: Բուրժուազիան շատ յերկրներում առանձնապես դաժան վերաբերմունք եր ցուց տալիս դեպի կոմմունիտարկան յերիտմիությունները, վորոնցից շատերն ստիպված ելին անցնել անլեզալ դրության, իսկ մյուս կողմից կիՄ-ի միքանի սեկցիաներում, ամենից առաջ Գերմանիայում, Ֆրանսիայում և Նորվեգիայում յերեան յեկան լուրջ կրիզիսներ:

Այդ կրիզիսները հարկադրում ելին կոմիտմիություններին վորոշ դիրք բռնել դեպի վիճելի հարցերը, այսինքն անհրաժեշտ ելին դարձնում քաղաքական կամպանիաներ անցկացնելը: Բայց միևնույն ժամանակ քաղաքական անտարբերությունը, վոր յերիտասարդ բանվորական մասսաներից անցել եր նաև յերիտմիություններին, դժվարացնում եր այդ աշխատանքը: Պատառին, դժվարացնում եր այդ աշխատանքը: Պատառին կազմակերպությունների և ամբողջ Ինտերնացիոնալի բուռն աճման շրջանից հետո կանգ եր առել հետագա աճումը և նույնիսկ

սկսվել եր անդամների քանառկի նվազման շրջանը: Շատ միություններում սկսել ելին վատանակազմակերպության զանազան շերտերի փոխհարաբերությունները քաղաքականապես ավելի զարգացած ակտիվ անդամները գործոն մասնակցություն ելին ցուց տալիս կուսակցական դիմուսական սիմբոլին, իսկ կազմակերպության մեջ նոր մտած անդամներն այդ դիմուսական սիմբոլում չգտնելով իրանց զբաղեցնող հարցերի բավարարումը՝ գործունելության նոր հնարավորություններ ելին վորոնում միություններից գուրս կամ նույնիսկ բոլորովին հեռանում ելին նրանց շարքերից: Այս բոլորն, ինարկե, չեր կարող նպաստել յերկրորդ կոնգրեսի վորոշումների իրականացմանը: Շատ միություններում նորից սկսվեց այն դիմուսական, վոր յերկրորդ կոնգրեսում միջազգային մասշտաբով արդեն վերջացել եր: Առանձին միությունները կամ նրանց վորոշ ուժեղ խմբակները դուրս ելին գալիս այն վորոշումների դեմ, վոր ընդունված ելին իրանց ներկայացուցիչների կողմից յերկրորդ կոնգրեսում: Մանավանդ այդ կատարվում եր ամենակարևոր հարցերի վերաբերմամբ, ինչպես, որինակ, վերաբերմունքը դեպի կոմկուսակցությունները, կոմիերիտմիության դերը տընտեսական կռվում և այլն:

Զարտահայտվելով անմիջապես այդ վորո-

շումների գեմ՝ գործնականում նրանք չելին իրազործում այն, կամ գործում ելին բոլորովին հակառակ ուղղությամբ:

Այսպես, որինա՛լ, գերմանական յերիտմիության մեջ, չնայած յերկրորդ կոնդրեսսից անմիջապես հետո գումարված ազգային կոնդրեսսը հաստատել եր՝ Մոսկվայում ընդունված վորոշումները, շուտով առաջ յեկան տեսդենցներ, վորոնք գեմ ելին կոմիերիտմիությունը կուսակցության քաղաքականությանը յենթարկելուն։ Այս բանին առիթ ծառալեց գերմանական կոմկուսակցության մեջ ծագած կրիզիսը, վորի ժամանակ կուսակցության կենտրոն սկզբում բավականաչափ վորոշ դիրք չբռնեց դեպի ոպպորտյունիստական տարրերը, ինչպիսին ելին Լեվին և նրա կողման կիցները, վորոնք հետագալում արտաքալեցին կուսակցությունից։

Իտալիակի յերիտմիությունը կոմկուսակցության համագումարում, վոր կայացավ կոմինտերնի III կոնդրեսսից հետո, չնայած այն բանին, վոր այդ համագումարը կոմիերիտմիության կողմից բոլորովին ճիշտ ճանաչված քաղաքական դիմումը անցկացնում, գեմ արտահայտվեց կուսակցության քաղաքական դեկավարությանը և պահանջում եր յերիտմիությունն ընդունել վորպես քաղաքականապես ինքնուրուցն դեկավար կազմակերպություն։

Իտալական ընկերներն արտահայտվում ելին նույնպես անտեսական կովի գեմ։ Իտալական յերիտմիությունն այն ժամանակ առաջին անգամ մեծ պարագար եր սկսել ֆաշիզմի գեմ։ Այս կովում նա ընկալ խոշոր սխալանքի մեջ, դարձնելով յերիտմիությունը զուտ ռազմական, նեղ, մեկուսացած կազմակերպություն, վորը, ինարկե, պետք ե հրաժարվեր յերիտասարդության անտեսական շահերը վորեւ կերպ պաշտպանելու աշխատանքից։ Այս սկզբունքի պաշտպանության միջոցին իտալական ընկերները պաշտպանություն գտնելով Բորդիգայի կողմից՝ այնքան հեռու գնացին, վոր սկսեցին հաստատել, թե Իտալիակի յերիտասարդ բանվորներն ու գուղացիներն, ընդհանրապես, չունեն իրենց առանձին անտեսական շահերը։

Գերմանիայում բարվական խոշոր մի խումբ, վոր մի ժամանակ կենտրոնում մեծամասնություն եր կազմում, արտահայտվեց այն սկզբունքի գեմ, թե կոմսոմոլը պետք ե զեկավարի յերիտասարդ բանվորների անտեսական շահերի համար մղվող կոփվը։ Այս ընկերները յեներվ այն հանգամանքից, վոր Գերմանիայի միքանի արհմիություններին կից գոյություն ունելին պատանեկան սեկցիաներ, պահանջում ելին ընդհանրացնել այս սկզբունքը, այսինքն սխառեմատիկաբար պատա-

նեկան սեկցիաներ ստեղծել գոյություն ունեցող բոլոր արհմիություններին կից:

Կային նույնպես վորոշ շեղումներ յերկրորդ կոնգրեսի ընդունած վորոշումներից կոմմունիստական դաստիարակչական աշխատանքի վերաբերյալ: Իտալական ընկերները հրաժարվում ելին դաստիարակչական աշխատանքից, հիմնավորելով այդ հենց նույն առարկություններով, ինչով մերժում ելին տնտեսական կոիվը: Անգլո-սաքսոնական յերկրներում, կոմկուսակցությունների շարքերում գոյություն ունեցող համապատասխան շեղումների ազդեցության տակ, յերիտմիության մեջ նույնպես յերևան ելին յեկել, դաստիարակչական աշխատանքներին քաղաքական ընությալու փոխարեն, զուտ ընդհանուր բնույթ տալու տեսնդենցիներ:

Ավտորիական ընկերները մի ծալրահեղությունից անցնում ելին մտուսին և քաղաքական դաստիարակությունը բանվորական շարժման առորյա հարցերի հետ շաղկապելու անհրաժեշտության սկզբունքը հասկանում ելին այնպես, թե պետք ե հրաժարվել վորեե պլանաշափ սիստեմատիկ կոմմունիստական դաստիարակչական աշխատանք տանելուց, այլ պետք ե առարկաների ավանդումը տանել պատահական կերպով, նաևած բանվորական շարժման ընթացիկ անցքերին:

Կարևոր ե հիշել նաև այն, վոր այն միջոցին, յերբ Յերիտասարդական ինտերնացիոնալի առաջին և յերկրորդ կոնգրեսուների միջանկալ շրջանում բոլոր նման շեղումներն անցնում եին աննկատելի, այժմ միություններում վոչ մի այդորինակ յերկույթ չեր կատարվում, վոր չըննվեր Գործկոմում: Բովանդակալից գրավոր կապի և բոլոր խոշոր յերկրները հաճախակի ուղարկվող ներկայացուցիչների միջոցով նոր Գործկոմը կարողացել եր ապահովել իր խոկական ղեկավարող գերը շարժման մեջ: Յերիտասարդական ինտերնացիոնալին ավելի ու ավելի դասնում եր միասնական կենտրոնացած համաշխարհավին մի կազմակերպություն:

Այս շրջանում մենք նկատում ենք նույնպես մեկ ուրիշ նոր յերեւույթ: ԿիՄ-ը նույնպես, ինչպես և սրա նախորդը - Բերնում ստեղծված յերիտասարդական միջազգային միությունը — մինչև յերկրորդ կոնգրեսը ասց եր կացըել հատուկ միջազգային կամպանիաներ: Այդ բոլոր կամպանիաները չելին կրում զուտ պատահեկան բնույթ, բացի միջազգային պատահեկան որերից, վորոնք, սակայն, նույնպես գլխավորապես ընդհանուր քաղաքական բնույթ ելին կրում:

Յերկրորդ կոնգրեսից հետո, վոր իրավորձեց զուտ պատահեկան հարցերին անցնելը, տեղի

ունեցավ հատկապես բանվոր յերիտասարդության համար կազմակերպած առաջին խոշոր միջազգային կամպանիան։ Դա միասնական ֆրոնտի մի խոշոր կամպանիա յեր, վոր մղվում եր բանվորական յերիտասարդության համաշխարհային կոնգրեսս գումարելու նպատակով։

Այս կամպանիան մղվում եր յերկու պատճառով։

1. Կոմինտերնը կապիտալի հարձակմանը հակառակում եր պրոլետարական միասնական ֆրոնտի լոգունգը և սկսել եր այդ ուղղությամբ խոշոր միջազգային կամպանիա, վորն ուղղված եր գլխավորապես 2 և  $2\frac{1}{2}$  ինտերնացիոնալների դեմ։

2. ԿիՄ-ի յերկրորդ կոնգրեսսից փոքր ինչ առաջ նրա մեջ չմտնող յերկրոպական յերկրների պատճենեկան կազմակերպությունները միանալով կազմել եին միջազգային յերկու կազմակերպություն։ ԿիՄ-ը, վոր մինչ այդ բավական յերկար ժամանակ միջազգային պրոլետարական յերիտասարդական շարժման մեջ մոնուպուլ վիճակ ուներ, իրան գեմ հանդիման տեսավ յերիտասարդական ուրիշ յերկու ինտերնացիոնալ վորոնք միջին յերկրոպական յերկրներում բավականաշափ ուժեր ունելին իրանց արամագրության տակ։

Գերմանիայի և Հոլլանդիայի սոցիալ-պա-

տրիոտական պատանեկան կազմակերպությունները, վորոնք մինչ այդ վոչ մի միջազգային կազմակերպության մեջ չելին մտնում (մինչև իսկ անդամ չելին մինչալատերազման Յերիտասարդական ինտերնացիոնալի), իրանց վրա վերցրին ուրիշ նման կազմակերպությունների միության նախաձեռնությունը։ Նրանք միանալով բելգիական «Յերիտասարդ Գվարդիայի» և Շվեյցարի, Նորվեգիայի ու Ֆրանսիայի ԿիՄ-ի մեջ մտնող միություններից բաժանված սոցիալ-գենոկրատական կազմակերպությունների հետ, կազմեցին բանվորական յերիտասարդական ինտերնացիոնալ յերկրորդ ինտերնացիոնալի ղեկավարությամբ։ Ավարիական յերիտամիությունը, վորը սերտորեն կապված եր ցենտրիստական  $2\frac{1}{2}$  ինտերնացիոնալի ղեկավարների հետ, չեր կարող միանալ բանվորական յերիտասարդական սոցիալ-պատրիոտական ինտերնացիոնալին, քանի վոր այդ նրան չելին թուզ տալ իր իսկ անդամները։ Այդ պատճառով միանալով միջին յերկրոպական նույնպիսի միքանի կազմակերպությունների հետ, Վիեննայում ստեղծեցին իրանց սոցիալիտատական պատճենեկան կազմակերպությունների միջազգային միությունը։ Այդ միության մեջ մտան Զեխո-Սլովակիայի սոցիալիտատական յերիտամիությունը, Գերմանիայի պրոլետարական սոցիալիտատական յերիտամիությունը, Գերմանիայի

նը և Ֆրանսիայի սոցիալիստական գրեթե վաստորեն արդեն գոյություն չունեցող յերիտամիությունը:

Սոցիալ-պատրիոտական յերիտամիությունները շնորհիվ իրանց ապաքաղաքական գործունելության (հիմնված զլխավորապես զվարճությունների և ընդհանուր կրթության վրա), ինչպես և սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների և կառավարությունների ոժանդակության, իրանց կազմի մեջ ունելին բավական խոշոր թվով անդամներ: Բանվորական յերիտասարդական ինստերնացիոնալը կազմվելիս այդ միություններն ունելին մոտ 110.000 անդամ, վորոնց մեծամասնությունը պրոլետարական ծագում ուներ: Սոցիալիստական պատանեկան կազմակերպությունների միջազգային միությունը իր շարքերում հաշվում եր մոտ 45.000 անդամ, վորից 30.000-ը միան Ավստրիական զուտ պրոլետարական յերիտամիության անդամներն ելին:

ԿիՄ-ի առաջ խնդիր եր դրված՝ թուլացնել այս միջազգային կազմակերպությունների ազգեցությունը յերիտասարդ բանվորների վրա: Ամենուրեք յերեան յեկող քաղաքական պասսիվության այս շրջանում այդ կազմակերպությունները յենթադրում ելին ուժեղացնել իրանց շարքերը: Սակայն այն հանդամանքը, վոր կապիտալի հարձակումն

առանձնապես խստորեն անդրադառնում եր բանվորական յերիտասարդության վրա, իսկ յերկու սոցիալ-դեմոկրատական միությունները լսել անգամ չելին ուղում անտեսական կռվի մասին, — նպաստում եր ԿիՄ-ի ագիտացիայի հաջողությանն այդ կազմակերպությունների անդամների մեջ:

ԿիՄ-ն իր պայքարը հիմնավորում եր աշխատավոր յերիտասարդության ծանր դըռությամբ, վոր առաջացել եր կապիտալի հարձակման շրջանում: Նա գիմեց մյուս յերկու ինստերնացիոնալներին՝ առաջարկելով միացած ուժերով կռվել բանվորական յերիտասարդության աղքատացման դեմ:

Կոմինտերնն այդ միջոցին կամպանիա յեր անցկացնում 2 և  $2\frac{1}{2}$  ինստերնացիոնալների հետ միասին համաշխարհային բանվորական կոնգրեսս կումարելու համար: ԿիՄ-ն իր կողմից պահանջեց, վոր համաշխարհային բանվորական կոնգրեսսի որակարգում դրվի բանվոր յերիտասարդության և նրա վրա կապիտալի հարձակման ազդեցության հարցը, վորպես ինքնուրույն հարց: Յերբ 2 և  $2\frac{1}{2}$  ինստերնացիոնալների հետ բանակցությունները վերջացան առանց վորեւ հետևանքի, ԿիՄ-ի Գործկոմը դիմեց պատանեկան յերկու հակառակորդ կազմակերպություններին՝ առաջարկելով հրավիրել բանվոր յերիտասարդության հա-

մաշխարհային կոնգրեսս։ Սոցիալ-դեմոկրատական յերիտասարդական Ինտերնացիոնալիները փորձեր եին անում կազմելու բոլոր Ինտերնացիոնալիների միություն, բլոկ, վորին ԿիՄ-ը հակադրում եր միասնական յերիտասարդական Ինտերնացիոնալ կազմելու լոգունգը։ ԿիՄ-ը չբավականանալով միայն համաշխարհային կոնգրեսս հրավիրելու լոգունգով, մշակեց նաև կոնկրետ առաջարկություններ կովելու բանվոր յերիտասարդության շահերի պաշտպանության համար և կազմակերպեց նրանց ոգտին լայն ագիտացիա յերիտասարդության մասսաներում։

Այս կամպանիան նույնպես անհաջողությամբ վերջացավ, հանդիպելով յերիտասարդական սոցիալիստական Ինտերնացիոնալիների դիմադրությանը։ Բանվոր յերիտասարդության սոցիալիստական Ինտերնացիոնալն անշուշտ, համապատասխան ցուցմունքներ ստացել եր Ա Ինտերնացիոնալի քարտուղարից։

Միջազգային այս կամպանիայի անհաջողությունից հետո ԿիՄ-ը նման կամպանիաներ կազմակերպեց ազգային մասշտաբով։ Կամպանիաներ կազմակերպվեցին Գերմանիայում, Չեխո-Մովակիայում և Ավստրիայում, իսկ ավելի փոքր մասշտաբով Բելգիայում, Շվեյցարիայում, Հոլլանդիայում և Ֆրանսիայում։ Այս կամպանիաների շնորհիվ

ԿիՄ-ի հեղափոխական անտեսական դիրքը հայտնի դարձավ բանվորական յերիտասարդական ավելի լայն շրջաններին, քան մինչև այդ եր։ Միջազգային այս առաջին լայն յերիտասարդական կամպանիայի միջոցին տեղի ունեցած աչքի ընկնող միջադեպերից մեկն ել այն յերկարաժեկ գրագրություններ, վոր տեղի ունեցավ ԿիՄ-ի և Վիեննայի Միջազգային Միության միջև Ռուսաստանում ձերբակալված յերիտասարդ մենշևիկներին ազատելու մասին։ Միջազգային Միությունը միատեղ պայքարելու մասին վորևե բանակցությունն սկսելու նախադրյալ եր համարում Ռուսաստանի յերիտասարդ սոցիալ-դեմոկրատաներին ազատելը։

ԿիՄ-ի Գործադիր Կոմիտեն այս առթիվ իր հակառակորդներին փառավոր պատասխան տվեց՝ հիմնավորված բազմաթիվ աչք ծակող փաստերով, վորոնք ապացուցում ելին այդ «խեղճ», «անմեղ» յերիտասարդների գործունելությունը։ Միջազգային Միության ղեկավարները մինչև իսկ չհամարձակվեցին հրապարակել այդ պատասխանը։

Չնայած կամպանիայի հետևանքով համաշխարհային կոնգրեսս չհրավիրվեց, այնուամենայնիվ նա մեծ հաջողություն ունեցավ։ Նա յերկու հակառակորդ յերիտասարդական Ինտերնացիոնալները դեպի միացման ուղին հրեց։ Սրա հետևանքն այն յեղավ, վոր այդ կազմակերպություններից

հեռացան շատ տարրեր, վորոնք մինչև այդ հավատում եին, թե իրենց ղեկավարները ցանկություն ունեն գնալու բոլոր պրոլետարական հեղափոխական տարրերի միացման ձանապարհով, իսկ այժմ տեսան, վոր իրականում միացման են գնում սոցիալ-պատրիոտների հետ։ Բացի այդ, կամպանիան ավելի ժողովրդականացրեց ԿիՄ-ի յերկրորդ կոնգրեսում ընդունված տնտեսական մարտական ծրագիրը։ Մինչ այդ ընդհանրապես գոյություն չուներ պրոլետարական պատանեկան շարժման նման մի ծրագիր, սոց-զեմոկրատներն առհասարակ խուսափում ելին տնտեսական կովի հարցեր բարձրացնելուց, իսկ ԿիՄ-ը դրավված լինելով ընդհանուր քաղաքական գործունեյությամբ, նույնպես չուներ նման ծրագիր։ Սակայն այս ասպարիզում ԿիՄ-ի հաջողություններն այնքան ել մեծ չեին։ Յերկրորդ կոնգրեսից հետո հաջողվեց միայն հետևյալը։ — ԿիՄ-ը համաձայնության յեկավ Կարմիր Պրոֆինտերնի հետ, վորպեսզի այս վերջինը Պրոֆինտերնի կազմի մեջ մտնող բոլոր պրոֆմիությունների մարտական ծրագրի մեջ մտցնի բանվոր յերիտասարդության պահանջները։ Այդ համաձայնությունն զգալիորեն տարբերում է Պրոֆինտերնը Ամսաերդամի Ինտերնացիոնալից, վորը մինչև այժմ դեռ յերբեք չի զբաղվել հատկապես բանվոր յերիտասարդության խնդրով։

Բանվոր յերիտասարդության տնտեսական շահերի պաշտպանության համար կամպանիան լայնացնելուն վորոշ արգելք եր հանդիսանում միջազգական մասշտաբով յերիտասարդ բանվորության գրության մասին փաստական տվյալների բացակայությունը։ Զկային սիստեմատիկ նյութեր, կամ նույնիսկ բանվոր յերիտասարդության տնտեսական դրության փոքրիշատե կանոնավոր նկարագրություն։ ԿիՄ-ի Գործկոմը ձեռնարկեց այդ աշխատանքին, և նրան իսկապես շուտով հաջողվեց բավական ընդարձակ նյութ ժողովել, վորը և հիմք ծառայեց վերը հիշված մարտական ծրագրին։ Գործնական աշխատանքի նույնպիսի հիմքեր ստեղծելով առանձին յերկրներում՝ Գործկոմը մի շարք միությունների միջոցով համապատասխան կամպանիաներ կազմակերպեց ազգային մասշտաբով և մի շարք բաց նամակներով և առաջարկություններով դիմեց համապատասխան յերկրների պրոֆմիությունների կոնգրեսներին՝ կոչ անելով պաշտպանել յերիտասարդ բանվորների շահերն ընդդեմ կապիտալի։

ԿիՄ-ի ընդունած այս գծի ճշտությունն ավացուցվեց նրանով, վոր բանվորական շարժման պատմության մեջ առաջին անգամ զանազան յերկրներում սկսվեցին բավական բազմաթիվ յերիտասարդ բանվորների ինքնուրուն գործարիտական շահերի բանվորների ինքնուրուն գործարի-

դուլներ, վորոնց զեկավարը մեծ մասամբ կոմիտիամբությունն եր:

ԿիՄ-ի գարզացման ամփոփումներն անելով՝ մենք պետք են ասենք, վոր յերկրորդ կոնգրեսին հետևող շրջանում նա չկարողացավ մեծ հաջողություններ ունենալ այս նոր ուղիով։ Դա տակախալի դանդաղ փոփոխման, հին ուժերը նոր ֆրոնտում հավաքելու, ներքին դիսկուսիաների և հարցերի պարզաբանման մի շրջան եր։ Միքանի տեղերում կարելի յեր նկատել նույնիսկ վորոշ հետադիմություն։ Առանձնապես աչքի յեր ընկնում կոմիտիամբության քաղաքական ակտիվության թուլացումը, վոր միքանի յերկրներում հետևանք եր կապիտալի հարձակման շրջանում բանվոր յերիտասարդության մեջ նկատվող ընդհանուր ընկած արամադրության։

Այդ շրջանի ամենակարեւոր հաջողությունն այն եր, վոր ստեղծվեց յերիտասարդական Խոտերնացիոնալի ամուր զեկավարող կենտրոն։ ԿիՄ-ն ավելի շուտ, քան կոմինտերնը, դարձավ կենտրոնացած համաշխարհային ամուր մի կազմակերպություն, վորի սեկցիաներն աշխատում ելին Խոտերնացիոնալի Գործկոմի անմիջական զեկավարությամբ։

Յերբորդ կոնգրեսը նշանակված եր 1922 թվի զեկտեմբերին։ Այս կոնգրեսի նախապատ-

րաստական աշխատանքների միջողին Գործկոմն իր ուշագրությունը գարձեց այն հարցի վրա, թե ինչն է իրանց անհաջողությունների պատճառը։ Ի՞նչն է պատճառը, — հարց ելին տալիս իրանց զեկավարող ընկերները, — վոր չնայած սկզբունքային գծի փոփոխմանը, միությունները նկատելի հաջողություններ չունեցան մասսայական կազմակերպություններ դառնալու գործում։

Այս հարցի ուշագրի ուսումնասիրությունը ցուց տվեց, վոր ԿիՄ-ի շարքերում գոյություն ուներ հակասություն միությունների առաջ դըրված նոր խնդիրների և նրանց կազմակերպչական ձևերի միջև։ Կազմակերպչական ձևերը մնացել ելին անփոփոխ դեռ նախապատերազման շընակից, ԿիՄ-ի սեկցիաները, բացի ոռուսական կոմիտերիամբությունից, կազմված ելին նույն տերրիտորիալ սկզբունքով, ինչ սկզբունքով և հին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները։ Այս վերջիններն իրենց հիմնական խնդիրն ելին համարում ընտրությունների ժամանակ ձայներ հավաքելը և այդ պատճառով կազմակերպված ելին տեղական ընտրական շընաների համեմատ կոմիտերիամբությունը նոր անդամներ եր գրավում փոչ թե ձեռնարկություններում տարած սիստեմատիկ աշխատանքի միջոցով, այլ տեղական

խմբերի կազմակերպված յերեկուլթներին, դասախոսություններին և այլ հավաքուլթներին պատճառաբար ներկա գտնվող յերիտասարդներից:

Այս հարցի քննությունը կենտրոնական տեղ գրավեց յերկրորդ կոնգրեսսի աշխատանքներում, վորի որակաբար ամենակարևոր հարցը կազմում եր յերկրորդ կոնգրեսսի ընդունած վորոշումների կիրառումը կյանքում:

Արտաքինով այս յերրորդ կոնգրեսսը շատ քիչ եր տարբերվում յերրորդ կոնգրեսսից: Ներկա ելին 91 պատգամավոր 38 միություններից 800,000 անդամով: Ներկայացված կազմակերպությունների թիվը պակասել եր այն պատճառով, վոր յերկրորդ կոնգրեսսից հետո միքանի կազմակերպություններ միացել ելին: Որինակ՝ Բուխարայի միությունը միացել եր ռուսական կոմսոմոլին, Բուկովինայի և Սեմիգրադիեյի միությունները՝ ոռոմինական կոմսոմոլին և այն: Յերկու կոնգրեսսի վիճաբանությունները համեմատելով, կարելի յեր, սական, միանգամից նկատել կազմակերպչական և իդեոլոգիական մեծ հաջողություններ: Յերրորդ կոնգրեսսում զգացվում եր, վոր այստեղ հանդես են գալիս գործական մեծ փորձառություն ունեցող միասնական միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ: Նրանք հարուցում ելին զիստավորա-

պես իրանց գործունելությանը վերաբերող կոնկրետ հարցեր՝ աշխատանքի մեթոդների լավացում, առաջադրված հարցերի կիրառում կյանքի մեջ, պայքարի խորացում աշխատավոր յերիտասարդության շահերի համար. բոլոր յերկրներում:

Կոնգրեսսի կատարած աշխատանքների ամենալավ գնահատականը տրված է ԿԻՄ-ի Գործկոմի կողմից չորրորդ կոնգրեսսին ներկայացրած գեկուցման մեջ, վոր տեղի ունեցավ մեկ և կես տարի հետո, 1924 թվի ամառը:

— Հիմնվելով յերկրորդ և յերրորդ կոնգրեսսների միջանկալ շրջանում կատարած աշխատանքի և ձեռքբերված փորձի վրա, — ասված ե այդ գեկուցման մեջ, — յերրորդ կոնգրեսսը մոտավորապես համառոտ կերպով այսպես ձևակերպեց կոմիտասական կազմակերպությունների գլխավոր խնդիրները:

Կոմիտիտմիությունները զարգացնելով՝ դարձնել ըստվոր յերիտասարդության մասսայական կազմակերպություններ ինչպես նրանց սոցիալական կազմով, այնպես ել կազմակերպչական ծեվերով, բովանդակությամբ յեվ աշխատանքի մեթոդներով:

Կենտրոնական տեղ եր գրավում, անշուշտ հիմնական հարցի լուծումը՝ այնպիսի կազմակերպչական ծեվերը ստեղծել, վորոնք ննարավոր դարձը-

նեն պրոլետարական պատանեկան շարժման առ  
նոր տեսակի հետագա զարգացւուց: Կոնգրեսը  
լերկարատե ու հիմնական քննությունից հետո  
առաջարկեց միություններին կազմակերպել ի-  
րենց անդամներին ըստ արտադրական բջիջների,  
փորպեսզի սխտեմատիկ և սլանաչափ աշխատան-  
քի միջոցով նոր կազմակերպված այդ արտադրա-  
կան բջիջները հնարավորություն ունենան մո-  
տենալու լերիտասարդ բանվորությանը, առաջին  
հերթին ծանր արդյունաբերության մեջ:

Այս հարցի առմիվ լսվեցին շատ առարկու-  
թյուններ: Դրա պատճառը Յեփրոպալի պրոլետա-  
րական պատանեկան շարժման քսանամց տրա-  
դիցիաներն ելին, վորոնք շատ վորոշակի ձև ելին  
ստացել, և վորոնց հաղթահարելը հեշտ չեր ա-  
մենից առաջ իդեոլոգիական տեսակետով: Յեր-  
կրորդ, նույնպիսի կարևոր պատճառը գոյություն  
ունեցող ոբյեկտիվ դժվարություններն ելին (որի-  
նակ՝ այն վիաստը, վոր բանվորների բնակավայրը  
շատ հաճախ բավական հետու լեր աշխատավայրից,  
վորի պատճառով և նրանց մասնակցությունը  
բջիջի կյանքին ու գործունելությանը նույնպես  
դժվարանում եր): Յերրորդ պատճառը մեր միու-  
թյունների անբավարար սոցիալական կազմն եր:  
Պարզվում եր, վոր լերիտասարդ պրոլետարիատի  
վճռական նշանակություն ունեցող շերտերը —

խոշոր ինդուստրիալի լերիտասարդ բանվորները  
— կազմում ելին մեր միությունների անդամների  
անսշան մասը, քանի վոր մեզ հաջողվել եր մուտք  
գործել միայն շատ քիչ խոշոր ձեռնարկություն-  
ներ, իսկ անդամների մեծամասնությունը մանր  
և միջին արդյունաբերության մեջ աշխատող  
բանվորներ ելին, գրասենյակների ծառայողներ  
և այլն:

Կոնգրեսը շատ մանրամասնորեն քննելով  
այս բոլոր վիաստական արգելվները՝ այնուամե-  
նախիվ վորոշեց կազմակերպությունները կառու-  
ցել ըստ արտադրական բջիջների:

Հարցի այսպիսի լուծումով կոնգրեսը նա-  
խադրյաներ ստեղծեց սոցիալական կազմի փո-  
փոխման համար, վոր համապատասխան պիտի  
լիներ բանվոր լերիտասարդության կոմմունիս-  
տական մասսայական կազմակերպությանը: Մեր  
շարժումը համապատասխան սոցիալական կազմ  
կարող է ստեղծել միմիայն խոշոր արդյունաբե-  
րության մեջ արտադրական բջիջներ կազմակեր-  
պությունիվ, այդ բջիջների ակտիվ աշխատանքով, կի-  
րառելով կոմմունիստական մասսայական կազմա-  
կերպության մեթոդները: Մեր միությունների,  
վորպես կոմմունիստական մասսայական կազմա-  
կերպությունների, հիմնական կանոններն ու աշ-  
կերպությունների մեթոդները կոնգրեսը լրացրեց և

կոնկրետացրեց զլիսավորապես յերեք ուղղությամբ.

Առաջին՝ քաղաքական ակախվության հարցում։ Մենք արդեն նկատեցինք, թե ինչպես յերկրորդ կոնգրեսսի վորոշումը՝ կոմիերիտմիությունը կոմկուսակցության ղեկավարությանը յեսթարկելու մասին, մասնակի կերպով, մասնավանդ Միջին Յեվրոպայում, ճիշտ չեր ըմբռնված, ինչպես նրա կիրառումն այն աստիճան աղավաղված եր, վոր պակասել եր կոմիերիտմիությունների քաղաքական ակտիվությունը, կոնգրեսը հարկադրված եր կտրականապես վերացնել այս չափազանցությունները։ Բացի այդ կոնգրեսը քաղաքական-ակտիվության հարցը դարձրեց ուշադրության կենտրոն։ Նա վորոշեց, չնայած կոմիերիտմիությունը յենթարկվելու յե կոմկուսակցության քաղաքական ղեկավարությանը, բայց նա, այնուամենայնիվ, մնում ե քաղաքական կազմակերպություն, վորի քաղաքական ակտիվությունը կոմիերիտմիության հիմքը, ամբողջ գործունեցության մեթոդը և նրա զլիսավոր հատկանիշը պետք ե կազմի։ Առաջին հերթին կոնգրեսը վորոշեց բոլոր միությունների և նրանց անդամների ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը կուսակցական կյանքի, կուսակցության և բանվոր դասակարգի պայքարի բոլոր հարցերում։

Այսուհետև նա ընդգծեց, վոր միության ամբողջ գործունեյությունը, լինի դա լուսավորական-գաստիարակչական, թե անտեսական-պրոֆեսունական աշխատանք, աշխատանք գյուղում, թե մանկական խմբակներում, աշխատանք կազմակերպության մեջ, թե կազմակերպությունից պուրա—ամենուրեք և անփոփոխ պետք ե ունեղուրս— միությունը կազմական բնույթ, բովանդակություն և նպատակ։ Կարձ ասած՝ միության ամբողջ գործունեյությունը պետք ե կրի քաղաքական ակտիվություն, վորովհետև միայն այդ գեպքում միությունը կդառնա բանվոր դասակարգին և նրա պատագրական պայքարին ծառայող մի իրական ուժ։

Ներկայումս մենք պետք ե նորից ընդգծենք այդ անհրաժեշտությունը, չնայելով վոր շատ միությունների մեջ այդ ուղղությամբ նկատվում են անկասկած հաջողություններ և առաջադիմություն։ Մենք դեռ շատ մոտիկ անցյալում կարող ենք նկատել միքանի կարևոր միությունների մեջ աշխատանքի չափազանց նեղ, ցեխալին բնույթ կրող յերևությներ և վողջ աշխատանքի վոչ-բոլորովին հստակ արտահայտված քաղաքական զարգացում։ Յեթե մենք չորրորդ կոնգրեսում ել ստիպված ենք նորից գնել այս հարցը, ապա կոնգրեսն ընդհանուր առմամբ կարող ե

սակը, սոցիալական հասարակական ապահովություն ու դաստիարակություն։ Սրանով ԿԻՄ-ն առաջնուն եր, վոր փորձում եր սահմանել բանվոր յերիտասարդության դրության վերջնական նպատակն արտադրության մեջ։ Մինչև իսկ Յերիտասարդական ինստերնացիոնալի Շառուագարտիկոնդեսսի 1907 թվին ընդունած ծրագիրն իր հիմքում (թեև նրա առանձին պահանջներից նշանավոր մասը դեռ պահպանում էն իրանց այժմեյությունը) միայն ուժիորմների մի ծրագիր եր, վորի մեջ չկային նույնիսկ մի շարք կարեոր պահանջներ (արձակուրդ, զանազան հասակների համար բանվորական որվա կրճատում և այլն)։

Մուկվայում ընդունված ծրագիրը, ընդհակառակը, յերիտասարդ բանվորության անտեսական պայքարի մի հեղափոխական ծրագիր եր միջազգային չափով, վորը վճռական կերպով բացառում եր մանկահասակների աշխատանքը, իսկ մինչև 18 տարեկանների համար առաջադրում եր, անկախ կապիտալիզմի բարի կամքից և հնարավորություններից, մի շարք կարեոր պահանջներինչպես նյութական, նույնպես և առողջապահական ու դաստիարակչական։

Յերրորդ հարցը, վոր կոնդրեսսը մանրամասն քննության առավ, վերաբերում եր միլիտարիզմի դեմ մղվելիք կովի մոտակա խնդիրնե-

քին։ Շեշտելով յերկրորդ համաշխարհային կոնդրեսսի վորոշումները՝ նա մշտական զորքի վերացման, միջնորդ դատարանների, պատերազմի դեպքում ընդհանուր գործադրության առաջ բերելու մասին սոցիալ-պատրիոտների պացիֆիստական դատարկ ֆրազերոգիային նորից հակադրեց լենինյան պարզ լողունգներ, այն եւ «պայքար մանրբուրժուական պայցիֆիզմի դեմ», «բուրժուազիացի զինաթափում», «բուրժուական զորքի կազմակուծում և նրա ոգտագործումը պրոլետարիատի նպատակների համար», «իմպերիալիստական պատերազմների վերածումը քաղաքացիականի»։

Վիճաբանություններն այս հարցի շուրջը միջազգային լարված քաղաքական դրության պայմաններում մեծ նշանակություն ունեցան։ Ընդունվեցին շատ գործնական գիրեկաթիվներ բուրժուական զորքերում աշխատանք տանելու մասին, և վերջնական ձևակերպում ստացան մի շարք կոնկրետ խնդիրներ։

Նրանց նշանակությունը մեծ եր վոչ միայն այն պատճառով, վոր զբանով հիմք եր զբվում կոմիերիտմիությունների կոմմունիստական մասսայական աշխատանքներին ու նրանց մեթոդներին այդ ասպարիգում, այլև այն պատճառով, վոր գրանով ԿԻՄ-ը հիմք դրեց հակամիլիտարիստական փայլուն աշխատանքներին Գերմանիայի նվաճած շրջաններում, Ուուրի գրավման միջոցին։

Այս յերեք կարևոր հարցերի քննությամբ և հին կազմակերպչական ձևերի փոփոխման մասին ընդունած վորոշումներով յերրորդ համաշխարհային կոնգրեսում կոնկրետացրեց հիմնական խնդրի ելական կողմերը, այն եւ կոմյերի տվյալներունը զարգացնել վորպես յերիտասարդ բանվորության կոմմոնիստական մասսայական կազմակերպություն յեվ դրանով ստեղծել յերիտասարդ պրոլետարիատի ղեկավարող որգան։ Ընդունելով ԿԻՄ-ի առաջարկված ծրագիրը՝ կոնգրեսը ըրացրեց ու վերջացրեց պատանեկան կոմմոնիստական մասսայական կազմակերպության ղերի, խնդիրների յեվ աշխատանքի մեջողների ըյուրեղացման գործը։

Յերրորդ կոնգրեսուի վորոշումները շուտով պետք եւ լուրջ փորձությունների յենթարկվելին։ Խստերնացիոնալի ներքին դրությունն այնպես եր զարգանում, վոր միջազգային անցքերի ամբողջ ընթացքը միություններից պահանջում եր ուժեղացրած քաղաքական աշխատանք։ 1923 թվին Յեվրոպայում ծագած խոշոր անցքերի միջոցին պարզվեց, վոր կոմինատերնի սեկցիաներում գեռես պահպանվել ելին ոպպորտունիստական տրադիցիաների բավական խոշոր մնացորդներ։ Գերմանիայում, Բոլգարիայում և Լեհաստանում կոմմոնիստական կուսակցությունները հեղափո-

խական խոշոր բռնկումների մոմենտին իրանց կոչման բարձրության վրա չկարողացան մնալ։ Դրանց հետեւող պարտություններն այս կուսակցությունների շարքերում դիսկուսիա առաջացրին այդ անցքերի գասերի մասին։ Դիսկուսիան չսահմանափակվեց անմիջապես այդ յերկրներով, այլ շուտով տարածվեց ամբողջ Խստերնացիոնալում։ Այս դիսկուսիայի ժամանակ պատասեկան կազմակերպությունները հաճախ խառնվում ելին քաղաքական կովին իրանց հատուկ տաքարյունությամբ։ Բոլոր կուսակցությունների մեջ, մասնավանդ ոպպորտունիստական թեքում ունեցող կուսակցությունների մեջ, ինչպես, որինակ, Բոլգարիայում, պատասեկան կազմակերպություններն առաջինն ելին դուրս գալիս կուսակցության կենտկոմների սխալների դեմ և ամենայեռանդուն կերպով մասնակցում ելին ամբողջ դիսկուսիային։ Յերիտամիությունները նորից կոմինտերնի լավագույն պաշտպանները հանդիսացան ոպպորտունիզմի դեմ մղած կովում։

Ուժեղ քաղաքական գործունելության այս նոր շրջանն, այնուամենայնիվ, տարբերվում եր Յերիտամիությունները ներկայացնում ելին զուտ քաղաքական մարտական կազմակերպություններ։ Տարբերվում եր նրանով, վոր այժմ նրանց գոր-

ծունելությունը չեր սահմանափակվում միայն քաղաքականությամբ։ Քաղաքական գործունելության հետ զուգընթաց կիՄ-ի սեկցիաները շարունակում ելին իրանց լեռանդուն աշխատանքը նաև ուրիշ ուղղությամբ, զլիսավորապես բուքժուական միլիտարիզմի դեմ կռվելով։

Առաջին անգամ կիՄ-ը հակամիլիտարիստական սլրոպագանդայից անցավ անմիջական յերկություների։ Այս կամպանիայի սկիզբն այն լայն հակապատերազման շարաթին եր, վոր կազմակերպվեց 1923 թվի մարտի 11—18-ը և վորը մի փայտուն եջ ե կազմում ինտերնացիոնալի պատմության մեջ։ Նախքան այս շարաթի կազմակերպումը կիՄ-ի Գործկոմը, յերբորդ կոնգրեսսի վորոշման համաձայն, գիմեց մյուս յերկու սոցիալիստական յերիտասարդական ինտերնացիոնալներին՝ առաջարկելով մասնակցել շարաթին։ Այդ արվեց յերիտասարդ բանվորության առաջ այդ կազմակերպությունների կեղծավոր քաղաքականությունը մերկացնելու նպատակով։ Յեկ իսկապես, յերկու ինտերնացիոնալն ել հրաժարվեցին մասնակցելուց։ Սոցիալ-պատրիստական ինտերնացիոնալը գտնում եր, վոր միլիտարիզմի և պատերազմի վտանգի դեմ պարագելը և առանձնապես Ռուրի շրջանի գրավման դեմ բողոքի կամպանիա կազմակերպելը յերիտա-

սարդության գործը չե, այլ հասակավորների։ Վիեննայի Միջազգային Միությունը նույն տեսակետին երև և նույնպես հրաժարվեց մասնակցելուց։

Կոմմունիստական Յերիտինտերնացիոնալը ինքն անցկացրեց այդ պրոպագանդիստական շաբաթը։ Նա նորից իր ազիտացիայով ընդդրկեց յերիտասարդ բանվորների լայն մասսաները և տարավ իր յետեկից։

Գերմանիայի, Ֆրանսիայի և Զեխո-Սլովակիայի բուքժուական կառավարություններն այդ կամպանիային պատասխանեցին բանտարկություններով և կոմյերիտամիության ակտիվ աշխատավորներին հետապնդելով։

Սակայն հենց նույն տարում հակամիլիտարիստական աշխատանքը դուրս եր յեկել սլրոպագանդիստական շրջանից։ Եվրոպական շատ միությունների մեջ մեր ըսկերներն ստիպված ելին իրանց վրա վերցնել շատ պատասխանատու աշխատանք։ Միջին Յեվրոպայում ծագեց մի փոքրիկ պատերազմ։ Նա, ճիշտ ե, չեր կատարվում թնդանոթների, տանկաների ու զրահապատճերի միջոցով։ Ֆրանսիական իմպերիալիզմը բավականացավ նրանով, վոր բավական խոշորաթիվ գորքով գրավեց գերմանական խոշոր ինդուստրիայի կենտրոններից մեկը—Ռուրի շրջանը։

Սակայն այս «փոքրիկ խաղաղ յելութիւն» ուներ ժամանակակից իմպերիալիստական պատերազմի բոլոր հատկանիշները։ Ֆրանսիայի յերիտասարդ բանվորներն ու գյուղացիները մոքիլիզացիայի յենթարկվելով ուղարկվում ելին ոտար յերկիր, վորտեղ նրանք պարտական ելին կովելու իրանց «հայրենիքի» կապիտալիստների շահերի համար։

Կոմմունիստական ինտերնացիոնալը ճիշտ բնութագրեց այս պատերազմը, վորպես իմպերիալիստական պատերազմ, վորն իր մեջ պարունակում ե հեղափոխական բռնկման սաղմեր։ Այս բնութագրից յելնելով՝ հեղափոխական բանվորները պետք ե իրենց նպատակ դնելին յերկու ժողովուրդների մեջ ծագած այդ պատերազմը վերածելու քաղաքացիական կովի։

Այս աշխատանքի գործնական կազմակերպումն իր վրա վերցրեց կոմիերիտական ինտերնացիոնալը։ Նա ֆրանսիացիների կողմից գրաված շրջանն ուղարկեց անլեզալ աշխատանքի փորձառություն ունեցող մեծ թվով ընկերներ միջին-յեվրոպական բոլոր յերկրներից։ Այդ ընկերները գերմանական կոմիերիտամիության տեղական կազմակերպությունների և ֆրանսիական կոմիերիտամիության կենտրոնի հետ համերաշխ գործակցությամբ սկսեցին ֆրանսիական գաղութային գոր-

գոր շական աշխատանքն սկսվեց Ռուբի գրավումից անմիջապես հետո։ Յերբ ֆրանսիական և աֆրիկական զորքերը մտան, որինակ, Դյուսսելդորֆ, նրանք արդեն գտան քաղաքի պատերին փակցըրած ֆրանսիական կոմիերիտամիության կենտրոնի կոչը ֆրանսերեն և արաբական լեզուներով։

Հակամիլիտարիստական այս աշխատանքի տեխնիկան որեցոր լավանում եր։ Նրա առաջին հաջողությունները յերևացին 1923 թվի գարնանը, յերբ զանազան զորամասերում առաջ յեկան զանազան խլառություններ, վորի հետևանքով այդ զորամասերը յետ կանչվեցին գրաված շրջաններից։ Ֆրանսիական կառավարությունն ստիպված եր հատուկ հանձնաժողով ուղարկել այդ խռովությունների պատճառը քննելու համար։ Այդ հանձնաժողովի յեղրակացության համաձայն սկսվեցին հետապնդություններ և կատարվեցին բազմաթիվ բանտարկություններ։ Այս բոլորը վերջացան Մայնցի նշանավոր պրոցեսով, վորի ժամանակ ֆրանսիական զինվորական դատարանի առաջ կանգնեցին գերմանացի, ֆրանսիացի, ավստրիացի, սերբ, չեխ և արաբ 150 կոմիերիտականներ։

Ավելի պակաս հաջողությամբ ելին զնում կիՄ.-ի սեկցիաների աշխատանքները մյուս ասպարեզներում և ամենից առաջ տնտեսական պրոֆեսսիոնալ աշխատանքների ասպարիզում։

Աշխատանքի այս ասպարիզում նկատելի հաջողություն չեր նկատվում և վոչ մի յերկրում։ Այս հանգամանքը բացատրվում եր մասսամբ նրանով, վոր կոմմունիստական պատահնեկան կազմակերպությունները հեռացել ելին իրանց նախկին բազայից—տերըիտորիալ բազայից, բայց դեռ չելին ամրացել նոր բջիջներում—ձեռնարկությունների մեջ։

Գործնականում արտադրական բջիջների կազմակերպումը հանդիպեց ավելի մեծ գժվարությունների, քան այդ յենթադրվում եր։ Այն դիմադրությունը, վոր նկատվում եր կոնգրեսում միքանի պատգամավորների կողմից, հանդես յեկավ նաև համարյա ըոլոր միությունների մեջ, յերբ քննվում ելին կոնգրեսսի վորոշումները։ Այս դիմուսսիալի վրա իզուր բավական շատ թանգարին ժամանակ գործադրվեց։ Այստեղ, վորակեղ տարածայնությունները վերջացան, և աշխատանքն սկսվեց, շատ շուտ կարելի յեր նկատել, վոր արտադրական բջիջների սիստեմի կազմակերպումը կատարելապես արդարացավ և խոշոր նշանակություն ունեցավ։ Այն ձեռնարկություններում, վորակեղ հաջողվել եր ամրանալ, բջիջները արագ մեծանում ելին, և հետզհետե վոչ միայն ավելանում եր անդամների թիվը, այլև փոխվում եր նրանց սոցիալական կազմը. պրոլետարական

տարրերն ուժեղանում ելին բջիջներում։ Թուլացման շրջանին հետեւեց նոր ուժեղացման շրջանը։ ԿիՄ-ի կարևոր սեկցիաներում նրանց անդամների թիվը յերրորդ և չորրորդ կոնգրեսսների միջանկյալ շրջանում ավելացավ մոտ 160 հազարով։

Առաջին տեղը աճման տեսակետից բռնում եր Ռուսաստանի կոմիերիտամիությունը, վորը 1921—22 թվերին նույնպես կորցնելով իր անդամների նշանավոր մասը, նորից աճեց և յերրորդ կոնգրեսսի ժամանակ 420 հազար, իսկ չորրորդ կոնգրեսսի ժամանակ 520 հազար անգամ ուներ։ Գերմանական միությունը 28 հազարից հասել եր 70 հազարի։ Հոկտեմբերյան պարտությունից հետո, յերբ կառավարության խստություններն ուժեղացել ելին, այդ թիվը հասավ 40 հազարի։ Ֆրանսիական միությունը 4 հազարից հասել եր 7 հազարի։ Իտալականը, չնայելով իր զարգացման ծանր պայմաններին, յերկու հազարից հասել եր 4500-ի, ամերիկականը՝ յերկու հազարից հինգ հազարի, անգլիականը՝ վեց հարյուրից հազար հինգ հարյուրի և չեխականն ութ հազարից հասել եր 13.500-ի։

Քանակական այս աճման հետ զուգընթաց աճել եր նաև մեր ազդեցությունը յերիտասարդության մասսաների վրա, վորի ապացուցն

Ելին մեր միությունների կազմակերպած մի շարք կամպանիաների հաջողությունները:

ԿիՄ-ի վերելքը համապատասխանում եր սոցիալիստական պատանեկան կազմակերպությունների շարքերի անկմանը: Դա բացատրվում է նրանով, վոր այդ շրջանում զարգանում ու լայնանում եր մասսայական պայքարը, վորին ավելի ու ավելի յեր մասնակցում յերիտասարդ բանվորությունը: Գործնականում նրանք համոզվում ելին, վոր սոցիալիստական միությունները հականեղափոխական կազմակերպություններ են: Բացի այդ, Վիեննայի Միջազգային Միության մեջ մտնող սոցիալիստական պատանեկան միությունները կորցրին իրանց անդամների մի մասին այն պատճառով, վոր նրանք հրաժարվեցին ինքնուրույն գոյությունից և միացան սոցիալ-պատրիոտական յերիտասարդական Ինտերնացիոնալին:

Յերրորդ և չորրորդ կոնգրեսսների միջանկալ շրջանի համար բնորոշ են հետևյալ մոմենտները.—ԿիՄ-ի սեկցիաները վերսկսեցին իրանց քաղաքական գործունելությունը, վոր մասամբ թուլացել եր յերկրորդ կոնգրեսսից հետո, քաղաքական աշխատանքին միացնելով աշխատանքը սակ մյուս ասպարեզներում: Արվեց առաջին և կարևոր քայլը՝ հին սոցիալ-դեմոկրատական տերբիտորիալ-կազմակերպչական ձեից բայց եկայան

կազմակերպչական ձեին—արտադրական բջիջներին անցնելու գործում: Կարևոր յերիտամիություններն ստեղծեցին առաջին արտադրական բջիջները, վորոնց վորձի վրա հիմնված պիտի տարածվեր կազմակերպչական այդ ձևը արևմտայեվրոպական պայմաններում: Հատուկ պատանեկան խնդիրներից համաշափ և հաջող աշխատանք տարվում եր միայն հակամիլիտարիտական կովի ասպարիզում:

Տնտեսական-պրոֆեսսիոնալ աշխատանքները, ինչպես և դաստիարակչական աշխատանքները գեռ շարունակում ելին սազմային դրության մեջ մնալ:

1924 թ. հունվարի 15—25 Մոսկվայում կայացած չորրորդ կոնգրեսսի առաջ հարց եր դրված ընդունել այնպիսի վորոշումներ, վորոնք միություններին հնարավորություն տային լրացնելու իրանց գործունեյության այս պակասավոր կողմերը: Չորրորդ կոնգրեսսն անցնում եր կոմմունիստական պատանեկան կազմակերպությունների բայց եկացման լոգունգի (նշանաբանի) տակ:

## ԿԻՄ-Ի ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԲԱՅԼՇԵՎԻԿԱՑՈՒՄԸ

Այս լոգունգը նշանակում եր, վոր կոմիերիտամիությունները պետք ե վերջնականապես գըտնելին իրանց գործունելության այն հատուկ ձևերը, վորոնք համապատասխան լինելին իրանց, վորպես պրոլետարիատի բայլշեվիկան ավանդարդի մի մասի, բնուլիթին:

Այն միջոցին, յերբ կուսակցությունների համար բայլշեվիկացման լոգունգը ավելի կամ պակաս չափով արգեն արված եր լենինիզմի ընդհանուր ծրագրով և բայլշեվիկան առաջին կուսակցության, Համամիությունական կոմիուսի փորձով, պատանեկան կազմակերպությունների գրությունն այլ եր: Բայլշեվիկան կոմիերիտամիության, Ռուսաստանի կոմիերիտամիության միակ որինակն ուներ միայն պայմանական անմիջական նշանակություն, քանի վոր նա ստեղծվել եր զլխավորապես պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելուն հետևող շրջանում: Պրոլետարական պատանեկան կազմակերպությունների

բայլշեվիկան մեթոգների թեորիական կողմը նույնական նոր-նոր եր սկսել մշակվել:

Կոնգրեսսն իր առաջ գրված պրոգլեմը լուծեց հետեւալ ձևով:

Նա ընդգծեց, վոր անհրաժեշտ ե լենինյան իդեաների տարածումը յերիտամիությունների մեջ, վորպես նախադրյալ նրանց բայլշեվիկացման: Մերս կատ կոմինաերնի հետ և նրա մատնանշած բայլշեվիկան տակտիկայի կիրառում, ավելի ինսամբ այն մասին, վոր կոմիերիտամիությունն ազատ լինի հակալենինդան թեքումներից—ահա բայլշեվիկացման առաջին նախադրյաները:

Սակայն կոմինաերնի բայլշեվիկան գործունելության սերտ մասնակցությունը միաժամանակ պետք ե լրացվեր լենինիզմի գաղափարների հասուլ պրոպագանդացով առանձին միությունների ներսում, այսինքն պետք եր ձեռնարկել կոմիերիտամիության պլանաշափ գաստիարակությանը համաձայն լենինիզմի սկզբունքների:

Հասուլ պատանեկությանը վերաբերող հարցերի մասին կոնգրեսսն անպայման ձիգտ տեսակետ ընդունեց՝ մատնանշելով, վոր ԿիՄ-ի նախկին կոնգրեսսների դիրեկտիվները տալիս են ձշտորեն այն շրջանակները, վորոնց մեջ պետք ե դարդանա պատանեկան կազմակերպությունների բայլշեվիկան գործունելությունը: Հարկավոր եր

միայն աշխատանքները լայնացնել ու խորացնել այնաեղ, վորաեղ այդ գործունելությունը գալն վում եր դեռ սաղմացին դրության մեջ:

Կոնգրեսուր հատուկ ուշադրություն դարձը եց կազմակերպչական հարցերի վրա: Նա սխալանքի մեջ չընկալ և չսահմանափակեց բայց շերկացումը միայն արտադրական բժիշներ կաղմակերպելով և չհամարեց այս վերջինը բայց ելլիկացման միակ բովանդակությունը: Նա մատնանշեց, վոր առանց միությունների վերակաղմության ըստ արտադրական բժիշների, չի կարող իրականանալ իսկական բայց կիկացումը:

Այսուհետև կոնգրեսուր լրջորեն զբաղվեց սնաեսական պայքարի հարցերով: Մինչ այդ այս գործունելությանը շատ քիչ ուշադրություն եր դարձվում, այնինչ յերիտբանվորական մասսաների հետաքրքրությունը դեպի իրանց ամենորակարիքներն աճում էր: Վորակեսպի ողնի միություններին այս ասպարիզում հաջողությամբ առաջ դնալ, կոնգրեսուր մանրամասն ցուցմունքներ տվեց կարմիր պրոֆմիությունների հետ համազործակցելու և ուժորմիստական պրոֆմիությունների մեջ ֆրակցիոն աշխատանք տանելու մեթոդների մասին: Նա ցուց տվեց այն միջոցները, որով պետք եր կապել մատեսական և պրոֆմիութենական աշխատանքն արտադրական բժիշ-

ների գործունելության հետ: Կոնգրեսուր ցուցմունքներ տվեց նաև մի շարք գործնական հարցերի մասին, ինչպես, որինակ՝ ձեռնարկություններում յերիտասարդ բանվորների ժողովների, ըստ արդյունաբերության ճյուղերի կոնֆերանսների կազմակերպման, բանվոր յերիտասարդների զանազան կատեգորիաների համար առանձին հատուկ ծրագրերի մշակման և այլն մասին:

Կոնգրեսուր որակարգում առաջին անգամ դրված եր իր ամբողջ լայնությամբ նույնպես ցուղական յերիտասարդության նվաճման հարցը: Այս հարցին ուղիղ մոտենալով կոնգրեսուր վորոշեց, վոր գյուղական յերիտասարդական մասսաներին մոտենալը պետք ե կատարվի գյուղակուրապես հակամիլիտարիտական աշխատանքի միջոցով, վոր յերիտասարդության կոմմունիտական միությունները բայց կիկացնելու ամենագրիսավոր մոմենտներից մեկն ե:

Զորբորդ կոնգրեսուր նախորդ բոլոր կոնգրեսուներից աարբերվում ենրանով, վոր նրա աշխատանքի նշանավոր մասը կատարվում եր հատուկ հանձնաժողովներում, վորուք մանրամասն քննության ելիս յենթարկում կիՄ-ի յեվրոպական և ասիական սեկցիաների դրությունն ու նրանց խնդիրները:

Զորբորդ կոնգրեսուր սկսվեց մի շրջան,

վորի ընթացքում շատ գժվար և հետեւ ամբողջ Ինտերնացիոնալի զարգացմանն ամբողջությամբ:

Առաջներում, յերբ յերիտամիությունները հանդիսանում ելին գլխավորապես պրոպագանդիստական կազմակերպություններ, նրանց գործունեցությունը զանազան յերկրներում մոտավորապես միանման եր և ընթանում եր համեմտարար նեղ շրջանակներում: Բայց յերբ պատճեկան կազմակերպություններն ոկսեցին մոտենալ իրանց յերկրների բանվոր յերիտասարդության մասսաներին և յերբ ոկսեցին սերտ գործակցություն կուսակցությունների հետ, զանազան յերկրներում ոկսեց առաջ զալ կոմիտեիտամիության միմյանցից տարրեր գործունելություն:

Նման յերեւցիթ մեկ անգամ արդեն նկատվել եր պրոլետարական պատճեկան շարժման զարգացման ոկզբնական շրջանում: Այն ժամանակ առաջին պատճեկան կազմակերպությունները նկատելի չափով տարրերվում ելին միմյանցից, նայտ յերիտասարդ բանվորների ճնշման աստիճանին անեն մի առանձին յերկրում:

Զնայած վոր հանձինս կիՄ.ի Գործկոմի պատճեկան շարժումն ունի միջազգային ընդհանուր դեկավար մարմին, չնայած վոր մի ընդհանուր միջազգային ծրագրի շնորհիվ նա կրում

է միամսնական ընույթ, այնուամենայնիվ ներկայումս մենք համգիստաես ենք այն բանին, վոր տարրեր յերկրներում ստեղծվում են պատճեկան կան կազմակերպությունների տարրեր տիպեր:

Միջազգային պրոլետարական պատճեկան շարժումը թեակոխում և իր զարգացման նոր լայն շրջանը, վորանդ ազգային առանձնահատկությունները՝ պայմանավորված անեն մի յերկրի հասուլ զրությամբ, շաղկապված են միջազգային միամսնականությամբ, ապահովված են միանուկան կենտրոնական զեկավարությամբ և կիՄ.ի ծրագրի գաղափարների միամսնականությամբ:

Սրանով մենք վերջացնում ենք Յերիտասարդական Կոմմունիստական Ինտերնացիոնալի պատմությունը: ԿիՄ.ի զարգացման պատմությունը չորրորդ կոնգրեսից հետո մեզանից կպահոննչեր առանձին յերկրներում ծագած բազմաթիվ առանձին նոր պրորեմիների նկարագրությունը:

Յերրորդ և չորրորդ կոնգրեսների միջանկալ շրջանին, յերբ քաղաքական գործունելությունը մտանակի կերպով գերակշռում եր հատուկ պատճեկան հարցերին, հաջորդեց մի շրջան, վորի ընթացքում կոմիտեիտամիությունները նորից առանձին ուշագրություն սկսեցին գարձնել իրենց հատուկ պատճեկան խնդիրների վրա և առենից

առաջ նոր յերիտասարդ բանվորների հոգերանությանը հարմարեցրած աշխատանքի մեթոդների մշակման վրա։ Այս շրջանը գեռ վերջացած չէ։ Կոմիերիտամիությունները գեռ վորոնումների մեջ են, փնտում են կոմիերիտական կազմակերպությունների գործունեցության կատարյալ ձևեր իշխանության համար մղվող կովի պայմաններում։ Յերկրորդ կոնգրեսսից սկսած այդ գործունեցության ընդհանուրը շրջանակները գծված են, և այդ աշխատանքի ղեկավարությունը գտնվում է համամիութենական կոմիերիտամիության ձեռքում։ Հենվելով պրոլետարական և գլուղագիտական յերիտասարդական մասսաների մեջ տարած կոմմունիստական աշխատանքի փորձի վրա, համամիութենական կոմիերիտամիությունը հետագայում նույնպես պետք է ակտիվ մասնակցություն ունենա կոմմունիստական պատահներան աշխատանքի նոր ձևերի մշակման գործում։

Դրա համար անհրաժեշտ է, վոր համամիութենական կոմիերիտամիության բոլոր անդամները մանրամասն ուսումնասիրեն կիՄ-ի արտասահմանան սեկցիաների զարգացման պատճությունը։ Միայն Խորհրդավին Սոցիալիստական Հանրապետությունների Միության կոմիերիտամիության լայն մասսաների գործակցությունը հնարավորու-

թյուն կտա Կոմիերիտական Ինտերնացիոնալին իրագործելու իր առաջ դրված խոշոր խնդիրները, վորոնց լուծման համար նաև անքան աշխատանք ե թափեր, և վորոնց վերջական լուծումը կպահանջի ել ավելի մեծ ջանքեր ու բազմաթիվ դոհարերություններ։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

### Ներածություն

|    |   |     |
|----|---|-----|
| 1. | Պըսլետարական պատահելան կաղմակերպությունները համաշխարհային պատերազմի ժամանակ . . . . .           | 3   |
| 2. | Կոմմունիստական Յերիտասարդական ինտերնացիոնալի համար . . . . .                                    | 8   |
| 3. | Բերլինի կոնգրեսը . . . . .  | 18  |
| 4. | Կոմմունիստական Յերիտասարդական Ինտերնացիոնալի առաջին քայլերը . . . . .                           | 26  |
| 5. | Ռուսաստանի Կոմյերիտամիությունը և Կոմմունիստական Յերիտասարդական ինտերնացիոնալը (ԿիՄ-ը) . . . . . | 40  |
| 6. | Նոր ուղիով . . . . .  | 61  |
| 7. | ԿիՄ-ի սեկցիաների բայլշինգումը . . . . .   | 75  |
|    |   | 112 |

34.

Феерия



Февраль 30-4.

ՀՀ Ազգային գրադարան



NL0188051

